

ՀԱՅ-Հայաստան

Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ

---

Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և  
Ընթացակարգերը

Մարտի 10, 2009թ.

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<u>Անվանում</u>	<u>Էջ</u>
<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</b> .....	i
<b>I. ՀԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆ</b> .....	1
Ա. Ներածություն.....	1
Բ. ՀԱՅ-Հայաստանի ծրագրերը.....	1
Գ. Ջրից դեպի Շուկա ծրագիր.....	2
Դ. ՀԱՅ-Հայաստանի ծրագրի կառավարման շրջանակ.....	3
Ե. ՀԱՅ-Հայաստանի ծրագրի կազմակերպության կառուցվածքը.....	5
<b>II. ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ</b> .....	6
Ա. Ընդհանուր տեսություն.....	6
Բ. Վարկային ծրագրի մասնակիցներ.....	7
Գ. Վարկային ծրագրի հավատարմագրման և գումարների տեղաբաշխման գործընթացը.....	9
Դ. Վարկային ծրագրի իրականացումը և գումարների հոսքը.....	12
Ե. Վարկային ծրագրի կառավարման կառուցվածքը, հաշվետվություն և դրամական միջոցների հոսքը.....	15
Զ. Վերահսկողություն, կառավարում և հաշվետվություն.....	15
<b>III. ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐ – ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ</b> .....	17
Ա. Համապատասխանության չափանիշներ.....	17
Մասնակցության ուղեցույց.....	17
Վարկեր վարկատուներին.....	18
Բ. Վարկի վավերացում և հաստատում.....	20
Գ. Վարկային փաստաթղթեր.....	20
Դ. Վարկի հաստատման և վճարման փաստաթղթեր.....	21
Ե. Վարկային փաստաթղթերի փաթեթ.....	21
<b>IV. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐ – ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՁՆԵՐ</b> .....	22
Ա. Նպատակ.....	22
Բ. Համապատասխան վարկավորման նպատակներ.....	22
Գ. Համապատասխան վերջնական վարկառուներ.....	24
Դ. Վերջնական վարկառուների վարկավորում - անհրաժեշտ պայմաններ և ժամկետներ.....	24
Ե. Վարկեր կանանց.....	27
<b>V. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ</b> .....	27
<b>VI. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ</b> .....	29
Ա. Պահանջներ.....	29
Բ. Բնապահպանական ստուգում.....	29

Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
**Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

VII. ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄ.....30

VIII. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ .30

Ա. Ընդհանուր տեղեկություն ..... 30

Բ. Աուդիտի ենթակա փաստաթղթերը..... 31

Գ. Աուդիտի պատասխանատուները..... 31

Դ. Աուդիտի ժամկետները..... 31

Ե. Հատուկ պահանջներ..... 31

ՀԱՎԵԼՎԱԾ I	ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ II	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՏ
ՀԱՎԵԼՎԱԾ III	ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎ

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

**I. ՀԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆ**

**Ա. Ներածություն**

2006թ. մարտի 27-ին Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան /ՀՄԿ/ ՀՀ Կառավարության հետ ստորագրեց 235.65 միլիոն ԱՄՆ դոլարի հնգամյա համաձայնագիր: Համաձայնագրի միակ նպատակն է հասնել գյուղական աղքատության նվազեցմանը՝ գյուղատնտեսական ոլորտի կայուն տնտեսական աճի միջոցով: Հայաստանը նախատեսում է հասնել այդ նպատակին գյուղական ճանապարհների, ոռոգման համակարգերի, տեխնիկական և ֆինանսական աջակցության ռազմավարական ներդրումների հնգամյա ծրագրի միջոցով ջրամատակարարումը բարելավելու, գյուղացիներին և ագրոարդյունաբերությանը աջակցելով:

Հաշվի առնելով, որ գյուղական բնակչության մոտ 40%-ը ապրում է աղքատության մեջ, իսկ գյուղատնտեսական արդյունավետությունը շատ ավելի ցածր է իր հնարավորություններից, տվյալ նախաձեռնությունը կարող է հանդես գալ որպես հիմնական օժանդակություն աղքատության նվազեցմանը ընդհանուր տնտեսության մեջ: Ծրագիրը ուղղակի ազդեցություն կունենա մոտ 750 000 մարդու վրա, այլ կերպ ասած գյուղական բնակչության 75%-ի վրա: Ակնկալվում է, որ այն կօժանդակի գյուղական աղքատության նվազեցմանը և տարեկան եկամուտների բարձրացմանը:

Համաձայնագիրը պաշտոնապես ուժի մեջ է մտել 2006թ.-ի սեպտեմբերի 29-ին, և համաձայնագրի ծրագրերն ու գործունեությունը կառավարելու համար ստեղծվել է Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան պետական ոչ առևտրային կազմակերպությունը /ՀՄՀ-Հայաստան/: Համաձայնագրի և ՀՄՀ-Հայաստանի ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ այցելելով ՀՄՀ-Հայաստանի հնտերնետային կայքը /[www.mca.am/](http://www.mca.am/):

**Բ. ՀՄՀ-Հայաստանի ծրագրերը**

ՀՄՀ-Հայաստանի գործունեությունն ուղղված է գյուղատնտեսական արդյունավետության երկու հիմնական խնդիրներին. ա) գյուղական ճանապարհների անմխիթար վիճակին և բ) ոռոգման համակարգի քայքայվածությանը: Տվյալ խնդիրներին անդրադառնում են երկու ծրագրերը.

1. Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը կմեծացնի գյուղական համայնքների մուտքը դեպի գյուղատնտեսական շուկա և կավելացնի ոչ-գյուղատնտեսական եկամտի հնարավորությունները և սոցիալական ենթակառուցվածքը գյուղական ճանապարհների վերականգնման շնորհիվ: 67 միլիոն ԱՄՆ դոլար ուղղված է մոտ 943 կմ գյուղական ճանապարհների վերականգնմանը: Դա կազմում է Հայաստանի ռազմավարական կարևորություն ունեցող ճանապարհների ցանցի մեկ երրորդից ավելին:
2. Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագիրը կբարձրացնի գյուղատնտեսական ոլորտի շահութաբերությունը՝ ընդլայնելով և բարելավելով ոռոգման համակարգը, հզորացնելով ոռոգման միավորները՝ ցանցը ավելի լավ կառավարելու համար և գյուղացիների համար իրենց արտադրանքը շուկա արտահանելու հնարավորություն ստեղծելով: Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի շահառուներն են 53 Ջրօգտագործողների Ընկերությունները /ԶՕԸ/ և դրանց անդամ 250 000 ֆերմերներ, որոնք կօգտվեն ավելի արդյունավետ և հուսալի ոռոգման ջրից և ինտենսիվ ինստիտուցիոնալ հզորացումից: Ոռոգվող գյուղատնտեսության ծրագրի շրջանակներում նախատեսված են երկու ենթածրագրեր.

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

ա. Ենթակառուցվածքների ծրագիրը կբարելավի առկա ենթակառուցվածքները՝ ոռոգվող տարածքներն ընդլայնելու և ջրի աղբյուրների և ջրամատակարարման արդյունավետությունն ու կայունությունը բարելավելու նպատակով:

բ. Ջրից դեպի Շուկա ծրագիրը /ՋՆԸ ծրագիր/ կզարգացնի ոռոգման կառավարման կազմակերպման հնարավորությունները՝ ցուցադրումների և վերապատրաստումների միջոցով աջակցելով ներտնտեսային զարգացմանը, հզորացնելով հետբերքահավաքի, վերամշակման և շուկայի տեղեկատվական ծառայությունները և մեծացնելով վարկավորման հասանելիությունը, որը հնարավորություն կընձեռի շահառու գյուղացիներին և ագրոբիզնեսին անցում կատարել դեպի ավելի շահութաբեր, շուկայամետ գործավարում, որը կայուն կլինի շրջակա միջավայրի պահպանման տեսանկյունից:

**Գ. Ջրից դեպի Շուկա ծրագիր**

ՋՆԸ-ի նպատակն է արագացնել ոռոգման վերականգնման տարածքներում ավելի շահութաբեր գյուղատնտեսական արտադրությանն անցնելու գործընթացը՝ ներկայացնելով և խրախուսելով ոռոգվող գյուղատնտեսության լավագույն փորձը, հետամուտ լինելով բարելավված ջրի կառավարման մեթոդների որդեգրմանը և անցմանը դեպի բարձրարժեք մշակաբույսերի աճեցումը՝ հզորացնելով կապը հետբերքահավաքի և վերամշակող ձեռնարկությունների և դրանց շուկաների միջև՝ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային, և հզորացնելով վարկատուների կողմից արտադրական և հետբերքահավաքային վերամշակման շահավետ առաջարկները ֆինանսավորելու հնարավորությունները:

Ոռոգման համակրգերում 21 ենթակառուցվածքների և ներտնտեսային համակարգերի ակնկալվող վերանորոգումը և ինստիտուցիոնալ հզորացման աշխատանքները, որոնք Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ենթակառուցվածքների բաժնի մի մասն են կազմում ազդեցություն կունենան շուրջ 115 000 գյուղացիների վրա՝ ընդգրկելով մոտ 46 000 հա ոռոգվող տարածք: ՋՆԸ ծրագիրը ուղղակի ազդեցություն կունենա նրանց մոտ 50%-ի վրա, որոնք կլինեն այն գյուղացիները, ովքեր կմասնակցեն վերապատրաստման դասընթացներին և կստանան տեխնիկական աջակցություն: Ավելի մեծ քանակությամբ գյուղացիներ կընդգրկվեն անուղղակի կերպով՝ շահառու համայնքների միջոցով տեղեկատվության տարածման շնորհիվ:

ՋՆԸ ծրագիրը վստահեցնում է, որ ՀՄԿ-ի կողմից Ոռոգման ենթակառուցվածքների ծրագրին տրվող ֆինանսավորումը կնպաստի գյուղատնտեսության արտադրողականության ու եկամուտների աճին՝ ծրագրով նախատեսված շրջաններում ուսուցման, տեխնիկական օժանդակության, ֆերմերներին վարկային միջոցների և գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիության միջոցով: Այս ծրագիրը շատ կարևոր է ֆինանսական հաստատությունների համար, քանզի դրա շնորհիվ գյուղացիները դառնում են բիզնեսի ավելի լավ հաճախորդներ և ավելի լավ տեղեկացված ու բանիմաց վարկառուներ: ՋՆԸ ծրագրի մեջ ներառված են բաղադրիչներ, որոնք հակիրճ նկարագրված են ստորև.

*Ջրի ներտնտեսային կառավարման /ՋՆԿ/ նոր տեխնոլոգիաների ներկայացում.*

ՋՆԿ-ի աշխատանքը կբարելավի ջրի կառավարման գյուղացիների հմտությունները և գյուղացիական տնտեսության մակարդակով կիրառելի սարքավորումների մատչելիությունը, ինչը թույլ կտա գյուղացուն բարձրացնել ոռոգման ջրի օգտագործման արդյունավետությունը: Վերապատրաստման դասընթացներ և ցուցադրություններ կիրականացվեն 60 000 գյուղացիների համար, որոնց մոտ 38 000-ը պետք է կիրառեն և ներդնեն ջրի խնայողության և արտադրողականության նորարական

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

մոտեցումները՝ իրենց գյուղատնտեսական գործունեությունից ստացած զուտ շահույթը մեծացնելու համար:

*Անցում Բարձրարժեք գյուղատնտեսությանը /ԲԳ/.*

Բարձրարժեք գյուղատնտեսություն բաղադրիչի նպատակն է մշակաբույսերի փոփոխության և բերքի ինտենսիվության ավելացման միջոցով աջակցել ավելի շահութաբեր գյուղատնտեսական արտադրության անցմանը: Այդ նպատակով ՋԸԾ ծրագրի խորհրդատու կազմակերպությունը կուսուցանի ՋՕԸ-երի սպասարկման տարածքում գտնվող 30 000 ֆերմեր, որոնք հնարավորություն կունենան այցելել ցուցադրական տնտեսություններ, ինչը կմեծացնի ֆերմերային տնտեսությունների արտադրանքի առևտրային արժեքը: Ուսուցանումը նպատակաուղղված կլինի ցուցադրման, ուսուցման և այլ գործողությունների միջոցով առևտրային գյուղատնտեսությանն ուղեկցող ռիսկերի մեղմացմանը, ինչպես նաև կատեղծվի շուկաների հետ կապը բաղադրիչի միջոցով /հետբերքահավաք, վերամշակում և մարկետինգ/: Համաձայնագրի ավարտին ակնկալվում է, որ ջրի հասանելիության բարելավման և արդյունավետ ուսուցման համատեղ արդյունքում մոտ 7 800 հեկտարով կավելանա բարձրարժեք գյուղատնտեսական արտադրությունը:

*Հետբերքահավաք, վերամշակում և մարկետինգ /ՀՎՄ/.*

ՀՎՄ բաղադրիչը կներկայացնի և կընդլայնի հետբերքահավաքային տեխնոլոգիաները, որոնք լավագույնս կապահպանեն գյուղատնտեսական ապրանքների որակը և կավելացնեն արտադրանքի արժեքը: Շուկայական պայմանների և հնարավորությունների մասին հավաստի տեղեկատվության հետ մեկտեղ այն կնպաստի թարմ և վերամշակված արտադրանքի ավելի լավ ներկայացմանը ներքին, տարածաշրջանային և միջազգային շուկաներում: Սննդի անվտանգության և որակի հավաստման հետ կապված հարցերը, ինչպիսիք են Վտանգների վերլուծության հսկման կրիտիկական կետեր /ՎՎՀԿԿ/ և Միջազգային ստանդարտներ կազմակերպության /ISO/ սերտիֆիկացումը, նույնպես կիրականացվեն այս ենթագործունեության միջոցով: Ակնկալվում է, որ համաձայնագրի ավարտին այս գործունեությունը անմիջականորեն կազդի 300 ագրոբիզնեսի ասոցիացիաների և փոքր ու միջին ձեռնարկությունների, իսկ անուղղակիորեն՝ 15 000 արտադրողների վրա:

*Վարկերի մատչելիության բարելավում.*

Տվյալ ենթաբաղադրիչի նպատակն է մեծացնել երկարաժամկետ և մատչելի վարկային միջոցների հասանելիությունը ՋԸԾ բաղադրիչի շահառուների համար: Վարկային բաղադրիչի գլխավոր շահառուներն են այն ֆերմերները, ովքեր անցել են ՋՆԿ և ԲԳ դասընթացները: Բարելավված ոռոգման ջրի մատակարարումը և ճանապարհները նոր հնարավորություններ կստեղծեն ֆերմերային տնտեսությունների և գյուղատնտեսական ուղղվածության գործունեությունների համար, որոնց համար ֆինանսավորումը ծայրահեղ կարևոր է: ՀՄՀ-Հայաստանը ընտրված ֆինանսական կազմակերպությունների համար կստեղծի մեծածավալ վարկային հնարավորություն գյուղատնտեսական ոլորտին վարկեր տրամադրելու համար:

**Դ. ՀՄՀ-Հայաստանի ծրագրի կառավարման շրջանակ**

ՀՄՀ-Հայաստանը ընդհանուր պատասխանատվություն է կրում համաձայնագրի իրականացման համար: Այդ նպատակով վերջինս իրականացման պարտականությունը կհանձնարարի իրականացնող կառույցներին հետևյալ կերպ.

1. Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիրը իրականացվում է Հայավտոճան պետական ոչ-առևտրային կազմակերպության /ՊՈԱԿ/ կողմից:
2. Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ենթակառուցվածքների բաղադրիչը իրականացվում է ՀՄՀ-Հայաստանի հատուկ խմբի կողմից:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

3. ՋՂՇ ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսությունն ծրագրի ինստիտուցիոնալ զարգացման բաղադրիչը իրականացվում են Սոթթ Մաք Դոնալդ/ՎԻՍՏԱԱ կոնսորցիումի կողմից:
4. ՋՂՇ ծրագրի վարկային բաղադրիչը կառավարվում է Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «Գյուղական ֆինանսավորման կառույց - ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից /ԳՖԿ/, ԷՍԻԴԻԱՅ/ՎՕԿԱ-ի կոնսորցիումի խորհրդատուի /ՋՂՇ խորհրդատու/ աջակցությամբ, տեխնիկական օժանդակությամբ և վերահսկողությամբ:
5. Ոռոգվող գյուղատնտեսությունն ծրագրի ՋՂՇ Ջրի ներտնտեսային կառավարման, Բարձրաթեք գյուղատնտեսության, Յետբերքահավաքային և վերամշակման բաղադրիչները կառավարվում են ԷՍԻԴԻԱՅ/ՎՕԿԱ կոնսորցիումի կողմից:

Ճանապարհների և ոռոգման ենթակառուցվածքների ծրագրերը իրականացվում են համապատասխան միավորների կողմից, պլանավորման, վերահսկողության և շինարարության վերաբերյալ մի շարք պայմանագրերի ներքո: ՋՂՇ ծրագիրը կկառավարվի ՋՂՇ խորհրդատուի կողմից՝ ոռոգման համակարգերի վերականգնման նպատակով ՅՄԿ-ի տրամադրած ներդրումների շահառու ներկայացող հատուկ աշխարհագրական տարածքներում ծառայություններ նատուցելու համար: Ծրագրի կառավարման երեք կառույցները /«Հայավտոճան»-ը, Ոռոգման ԾԻԳ-ը և ՋՂՇ խորհրդատուն/ կապահովեն նաև տեխնիկական փորձագիտություն՝ աշխատանքի պլանավորմանը աջակցելու համար:



## **II. ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

### **Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ տեսություն**

ՋրՇ ծրագիրը կներկայացնի նոր տեխնոլոգիաներ և կցուցադրի այլընտրանքային գյուղատնտեսական փորձը՝ գյուղատնտեսական եկամուտների աճը ապահովելու նպատակով: Գյուղական ճանապարհների և ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրերի հետ միասին այն պետք է ստեղծի նոր ներդրումների հնարավորություններ, որոնք համապատասխան ֆինանսավորում կպահանջեն: Ներկայումս, ինչևէ, գյուղատնտեսական ֆինանսավորման հնարավորությունները շատ սահմանափակ են, իսկ առկա ֆինանսական միջոցները կարճաժամկետ են և թանկ:

ՋրՇ ծրագրի վարկային բաղադրիչը կաջակցի ՅՄՅ-Հայաստանին երկու գործընթացներում՝ ընդլայնել գյուղատնտեսական ոլորտում վարկերի մատչելիությունը և օգտվել նոր ներդրումային հնարավորություններից:

1. **Վարկային ծրագիր.** ՅՄՅ-Հայաստանը կիրականացնի 8.5 միլիոն ԱՄՆ դոլար գումարի վարկային ծրագիր: Սույն ծրագիրը համապատասխան ֆինանսական հաստատություններին առաջարկում է մինչև 7 տարվա ֆինանսավորում՝ տարեկան 4.0% ֆիքսված տոկոսադրույքով: Վարկային ծրագիրը վարկատուներին տրամադրում է անհրաժեշտ երկարաժամկետ կապիտալ՝ ՅՄՅ-Հայաստանի շահառու ֆերմերներին և ագրոձեռնարկություններին /վերջնական վարկառուներ/ վարկ/լիզինգ տրամադրելու նպատակով: Լիզինգը ներառված է ծրագրի շրջանակներում և հանդիսանում է փոխատվության ձև:
2. **Տեխնիկական աջակցություն կարողությունների զարգացմանը.** Երկու կողմերին՝ և՛ առաջարկողին /վարկատուներին/ և՛ պահանջարկ ներկայացնողին /վերջնական վարկառուներին/ տեխնիկական աջակցություն է տրամադրվում արդյունավետ ֆինանսական գործարքների մեջ ներգրավվելու, իրենց կարողությունները զարգացնելու համար:

**ա. Վարկատուներ.** Ընտրված վարկատուներին /ֆինանսական հաստատություններ, որոնք ՅՄՅ-Հայաստանի հետ կկնքեն վարկային պայմանագրեր/ աջակցություն է տրամադրվում գյուղական տարածքներում գյուղացիներին և ագրոձեռնարկություններին ապահով և շահութաբեր վարկեր տրամադրելու կարողությունները ամրապնդելու համար: Վարկային մասնագետները անցնում են վարկային գործնական հմտությունների վերաբերյալ ուսուցում և դառնում ավելի բանիմաց՝ գյուղատնտեսական ձեռնարկությունների, կանխիկի հավաքագրման փուլերի, գյուղատնտեսական ռիսկերի և դրանց մեղմացման հարցերում:

**բ. Վերջնական վարկառուներ.** Մինչդեռ վարկային մասնագետները պետք է ավելի լավ հասկանան թե ինչ է գյուղատնտեսական ֆինանսավորումը, գյուղացիները և ագրոձեռնարկությունները պետք է լավ պատկերացնեն իրենց բիզնեսի ֆինանսական ասպեկտները՝ ինչպես լավ հաշվառումներ պահպանել, ինչպես պատրաստել և ներկայացնել իրենց ներդրումների ռազմավարությունը կամ բիզնես ծրագիրը, որ այն ցուցադրի վարկը մարելու իրենց հնարավորությունը: Տեխնիկական աջակցություն կցուցաբերվի նաև հնարավոր վերջնական վարկառուների ֆինանսական կրթվածությունը բարձրացնելու համար: Նպատակն է՝ նրանց դարձնել ավելի լավատեղյակ և զրագետ վարկառուներ իսկ վարկատուներին օգնել նվազեցնել վարկի գործառնական ծախսերը և ռիսկը:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

**Բ. Վարկային ծրագրի մասնակիցներ**

ՀԱՀ-Հայաստանը կրում է ընդհանուր կառավարման պատասխանատվությունը և վերահսկում է վարկային ծրագիրը: Ծրագրի իրականացմանն ու կառավարմանը աջակցելու նպատակով ՀԱՀ-Հայաստանը պայմանագրեր է կնքել երկու հիմնական մասնակիցների հետ՝ Գյուղական ֆինանսավորման կառույցի և ՋՀՇ խորհրդատուի հետ: Այս մասնակիցներից յուրաքանչյուրը կիրականացնի իրեն համապատասխան գործընթացը՝ աջակցելու, իրականացնելու և կառավարելու վարկային ծրագրի ամենօրյա գործառնությունները և իր ներդրումը կունենա վարկային ծրագրի արդյունավետ իրականացման գործում: Ստորև նկարագրված է մասնակիցներից յուրաքանչյուրի դերը և նրանց փոխհարաբերությունները: Հետագայում ներկայացված II Ե մասը սխեմատիկ պատկերում է ներքոգրյալը:

**Հազարամյակի մարտահրավեր կորպորացիա.** ՀԱԿ-ն ՀԱՀ-Հայաստանին կտրամադրի մինչև 8.5 միլիոն ԱՄՆ դոլար՝ ՋՀՇ վարկային ծրագրի համար: Գումարները կտրամադրվեն տրանշերով՝ հիմնվելով ծրագրի իրականացման առաջընթացի վրա:

**Ֆինանսական գործակալ.** Ֆինանսական գործակալը պատասխանատու է ՀԱԿ-ի գումարների վճարման գործընթացի իրականացման համար՝ ՀԱՀ-Հայաստանի համաձայնությամբ:

**ՀԱՀ-Հայաստան.** ՀԱՀ-Հայաստանը կրում է վարկային ծրագրի մեկնարկի, իրականացման և կառավարման ընդհանուր պատասխանատվությունը, ներառյալ.

- ՋՀՇ վարկային ծրագրի համար գործունեության շրջանակների մշակում /որը կզետեղվի Ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը փաստաթղթում/
- Ֆինանսական հաստատությունների ընտրություն, որոնք կհանդիսանան վարկատուներ
- ՋՀՇ վարկային ծրագրի գումարների տեղաբաշխում վարկատուներին՝ ԳՖԿ-ի առաջարկած վարկերը ֆինանսավորելու համար
- Իրականացնող կառույցի /ԳՖԿ/ վերահսկում, ԳՖԿ-ի գործունեության շրջանակների սահմանում իրականացնող կառույցի պայմանագրում, որը տեղադրված է ՀԱՀ-Հայաստանի ինտերնետային կայքում /[www.mca.am/](http://www.mca.am/), ներառյալ համապատասխանությունը ՀՀ շրջակա միջավայրի մասին օրենքին և ՀԱԿ բնապահպանական ուղեցույցին
- Աուդիտի ծրագրի հաստատում և իրականացում՝ ԳՖԿ-ի մասնակցությամբ և ՀԱԿ-ի հաստատմամբ
- Համաձայնագրի ավարտին ՋՀՇ վարկային ծրագրի գումարների տնօրինման ռազմավարության մշակում

**Գյուղական ֆինանսավորման կառույց.** ԳՖԿ-ն նշանակվել է որպես ՀԱՀ-Հայաստանի ծրագրի իրականացնող կառույց, որի մասին ավելի մանրամասն նկարագրված է Իրականացնող կառույցի պայմանագրում: ԳՖԿ-ն կուսումնասիրի վարկատուների կողմից ներկայացված վարկային դիմումները /վարկային փաթեթների ձևով/՝ դրանց ծրագրային համապատասխանության /և ոչ թե վարկի որակի/ ստուգման համար և վարկատուների հետ կհամակարգի աշխատանքային բոլոր գործընթացները: Առաջադրանքները ներառում են.

- Ծրագրին համապատասխանությունը որոշելու համար ստուգել վարկային փաթեթները /ուսումնասիրելով վարկատուների կողմից վարկային դիմումների գնահատման համար ներկայացված փաստաթղթերը/
- ՀԱՀ-Հայաստանին ներկայացնել առաջարկություններ վարկատուներին վարկերի գումարների վճարման վերաբերյալ

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

- Իրականացնել վարկատուների մոնիտորինգ՝ ծրագրի պահանջներին համապատասխանության նպատակով /ներառյալ բնապահպանական պահանջները/, ծրագրին մասնակցությունը շարունակելու համար
- Պահպանել վարկերի հաշվառումը և ՀՄՅ-Հայաստանի վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված ՀՄԿ-ի գումարների հաշվապահությունը
- Մշակել և կիրառել ԳՖԿ աշխատակիցների կողմից Գործառնությունների և մոնիտորինգի ուղեցույց՝ ՋրՇ վարկային ծրագրի կառավարման համար, որը պետք է հաստատվի ՀՄՅ-Հայաստանի կողմից
- Աջակցել ՀՄՅ-Հայաստանին ՋրՇ վարկային ծրագրի գումարների տնօրինման ծրագրի նշակման հարցում

**Վարկատուներ.** Ընտրված վարկատուները կանգնած են վարկային ծրագրի իրականացման առաջին գծում: Առաջադրանքները ներառում են.

- ՀՄՅ-Հայաստանի վարկային ծրագիրը ներկայացնել վերջնական վարկառուների նպատակային հատվածին
- Վարկավորել վերջնական վարկառուներին ըստ Ծրագրի վարչական քաղաքականության և ընթացակարգերի և ՀՄՅ-Հայաստանի հետ կնքած վարկային պայմանագրի
- Պահանջված ձևով ներկայացնել գործունեության ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվությունները
- Շրջահայաց ձևով վերահսկել բոլոր վարկառուների վճարումները, մարումները, բիզնես գործունեությունը, բնապահպանական պահանջների հետ համապատասխանությունը և վարկավորման գործընթացի համար ապահովել պատշաճ վարկային ադմինիստրացիա
- Իրականացնել սեփական անկախ վարկային վերլուծությունը, գրավների գնահատումները, վարկային որոշումները և կրել վարկառուների և/կամ երաշխավորողների վճարումների և վարկի վերադարձման բոլոր ռիսկերը

**Վերջնական վարկառուներ.**

- Կիրառել գյուղատնտեսական արտադրությունը բարելավելու մեթոդներ
- Մեծացնել գյուղատնտեսական ոլորտում ներդրումները
- Բարելավել իրենց ֆինանսական հաշվառումը և դառնալ ավելի գիտակ՝ վարկի համար դիմելու և այն տնօրինելու հարցում
- Նախատեսված նպատակով օգտագործել գումարները և վարկը ժամանակին մարել

**ՋրՇ խորհրդատու.**

- Խորհուրդ տալ, աջակցել, օժանդակել ՀՄՅ-Հայաստանին և ԳՖԿ-ին և աշխատել նրանց հետ վարկային ծրագրի մեկնարկի և իրականացման ժամանակ
- Վարկատուների վարկային մասնագետների կարողությունների մեծացում՝ գյուղատնտեսական վարկառուներին ավելի արդյունավետ ուսումնասիրելու և վարկերը վերլուծելու համար
- Վերջնական վարկառուների կարողությունների հզորացում՝ նրանց ֆինանսական կրթվածությունը մեծացնելու և վարկի ավելի լավ հաճախորդ դարձնելու նպատակով:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

**Գ. Վարկային ծրագրի հավատարմագրման և գումարների տեղաբաշխման գործընթացը**

2007թ.-ի դեկտեմբերին ՀԱՀ-Հայաստանը առաջարկեց ֆինանսական հաստատություններին, որպեսզի վերջիններս դիմեն հավատարմագրում ստանալու համար: 2008թ.-ի փետրվարին 11-ին ֆինանսական հաստատություններ հավատարմագրվեցին որպես վարկատուներ և նույն ամսվա վերջում նրանցից չորսը հաղթեցին աճուրդում, որի ընթացքում պայմանագրային երկրորդ տարվա հասանելիք 1.5 միլիոն ԱՄՆ դոլարը տեղաբաշխվեց նրանց միջև: Աճուրդին հաջորդող քայլերը կատարվեցին այդ ժամանակ գործող Ծրագրի վարչական քաղաքականության և ընթացակարգերի /ԾՎԲԸ/ համաձայն:

Այսուհետ վարկատուները կընտրվեն և ՋԻՇ վարկային ծրագրի գումարները կտեղաբաշխվեն հետևյալ կերպ.

**1. Ֆինանսական հաստատությունների հավատարմագրումը որպես վարկատուներ.**

Բոլոր նախապատրաստական քայլերից, այդ թվում՝ Կառավարման խորհրդի կողմից Ծրագրի վարչական քաղաքականության և ընթացակարգերի /որոնք կսահմանեն ծրագրի բոլոր ասպեկտները և կտրամադրեն այն փաստաթղթերը, որոնք կօգտագործվեն հետագայում/ հաստատումից հետո ՀԱՀ-Հայաստանը կսկսի ֆինանսական հաստատությունների հավատարմագրման գործընթացը՝ ըստ հետևյալ քայլերի.

- ՀԱՀ-Հայաստանը կհայտարարի հավատարմագրման գործընթացի սկիզբը և ֆինանսական հաստատություններին կհայտարարի հավատարմագրման համար դիմելու առաջարկությունը: Հայտարարության մեջ կլինի ՀԱՀ-Հայաստանի ինտերնետային կայքի հասցեն, որտեղ զետեղված կլինեն ԾՎԲԸ-ի և ՀԱՀ-Հայաստանի վարկային պայմանագրի օրինակները: Հայտարարությունից հետո մոտ հինգ աշխատանքային օրվա ընթացքում ՀԱՀ-Հայաստանը կոնֆերանս կկազմակերպի ֆինանսական հաստատությունների ծրագրին վերաբերող հարցերին պատասխանելու համար:
- Հայտարարություն տալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում ֆինանսական հաստատություններից կպահանջվի ներկայացնել հավատարմագրման հայտերը նամակի տեսքով: Ուշացողները կներժվեն: Ֆինանսական հաստատությունները պետք է ներկայացնեն
  - ա. Հաստատեն իրենց համապատասխանությունը մաս III-ի Ա-ում սահմանված ծրագրի համապատասխանության չափանիշներին,
  - բ. ՀԱՀ-Հայաստանի սահմանած ծախսերի մատրիցայի միջոցով տրամադրեն հետևյալ ինֆորմացիան. 1) Տոկոսադրույք՝ այն առավելագույն տոկոսադրույքը, որը կգանձվի վերջնական վարկառուներից /այն ներառում է հիմնական դրույքը և հաստատության կողմից առաջարկված սփռվածքը (մարժան)/ (ծրագրի շրջանակներում վերջնական վարկառուներից գանձվող առավելագույն տոկոսադրույքը չպետք է գերազանցի 12%-ը: Հավատարմագրման դիմած ցանկացած հայտ, որում նշված վերջնական վարկառուներից գանձվող տոկոսադրույքը կգերացանցի 12%-ը, ՀԱՀ-Հայաստանի կողմից չի դիտարկվի), 2) վճարներ՝ վճարների այն առավելագույն տոկոսը, որը կգանձվի վերջնական վարկառուից վարկի գոյության ամբողջ ընթացքում /սա չի ներառում վարկի այլ՝ երրորդ կողմին վճարվող ուղղակի վճարները, ինչպիսին են գնահատման, նոտարական, գրանցման կամ փաստաթղթերի հետ կապված վճարները/, 3) Մանրամասն բացատրություն, վարկի գումարի առավելագույն տոկոսի արտահայտմամբ, այն բոլոր այլ ծախսումների վերաբերյալ, որ

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

պոտենցիալ վերջնական վարկառուն պետք է կատարի որպեսզի կարողանա վարկ ստանալ: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում բաժնեմասերի գնումով.

- գ. աուդիտ անցած իրենց վերջին ֆինանսական հաշվետվության և կից ծանոթագրությունների պատճենները,
- դ. ընթացիկ տարվա հրապարակման համար նախատեսված առկա միջանկյալ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, որը ներառում է հետևյալ հաշվետվությունները համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2007թ.-ի հուլիսի 10-ի թիվ 205Ն և 2003թ.-ի օգոստոսի 12-ի թիվ 279Ն որոշման`
  - 1) ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն` ձև 6
  - 2) միջանկյալ հաշվապահական հաշվեկշիռ` ձև 7
  - 3) սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն` ձև 8
  - 4) դրամական հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն` ձև 9
  - 5) միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին կից ծանոթագրությունները` ներառյալ հաշվապահական հաշվառման վարման քաղաքականությունը` ձև 5 /վերաբերվում է միայն բանկերին/:
- Ֆինանսական հաստատություններից հավատարմագրման հայտերը ստանալուց հետո ՀԱՀ-Հայաստանը կգրանցի ստացման ամսաթիվը և ժամը: Պատասխանները ստանալու ժամկետը լրանալուն պես ՀԱՀ-Հայաստանը ֆինանսական հաստատությունների ներկայացուցիչների ներկայությամբ կբացի պատասխանները /կիրավիրվեն բոլոր դիմած ֆինանսական հաստատությունները/: ՀԱՀ-Հայաստանը կհավաքի գնահատման մատրիցաները ըստ հաստատությունների այնպես, որ դրանք դասավորված լինեն ամենացածր տոկոսադրույք առաջարկածից մինչև ամենաբարձրը:
- Դրանից անմիջապես հետո ՀԱՀ-Հայաստանը կուսումնասիրի հայտերը, ներառյալ աուդիտորական ստուգումները և եռամսյակային հաշվետվությունները, և կկազմի այն հաստատությունների ցուցակը, որոնք համապատասխանում են սահմանված չափանիշներին: Այնուհետև այդ ցուցակը կներկայացվի Հայաստանի Կենտրոնական բանկին ֆինանսական հաստատությունները լիցենզավորված լինելու փաստի և Կենտրոնական բանկի պահանջներին համապատասխանության հաստատումը ստանալու համար: Կենտրոնական բանկի կողմից հաստատվելուց կամ փոփոխվելուց հետո ցուցակում կարվեն անհրաժեշտ փոփոխությունները և ՀԱՀ-Հայաստանը Կառավարման խորհրդի հաստատմանը կներկայացնի շահագրգիռ և չափանիշներին համապատասխանող ֆինանսական հաստատությունների ցուցակը` յուրաքանչյուրի ծախսերի մատրիցայի տեղեկության հետ: ՀԱՀ-Հայաստանը կամ Կառավարման խորհուրդը կարող են իրենց ընտրությամբ մերժել այս կամ այն ֆինանսական հաստատության հավատարմագրումը` հիմք ընդունելով վերջինիս ոչ լավ աուդիտի եզրակացությունը կամ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:
- Կառավարման խորհրդի կողմից հաստատվելուց հետո համապատասխանող ֆինանսական հաստատությունները կստորագրեն ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագիրը: Համապատասխանող, հաստատված ֆինանսական հաստատությունները, որոնք կկնքեն պայմանագիրը կհամարվեն վարկատուներ և կարող են մասնակցել երկրորդ փուլին /տեղաբաշխման գործընթացին/: ՀԱՀ-Հայաստանը նախատեսում է հավատարմագրումը անցկացնել 2009թ.-ի փետրվարին և հավատարմագրված ֆինանսական հաստատությունները կարող են գումարների ստացման համար դիմել մինչև վարկային ծրագրի ավարտը: Ինչևէ, հնարավոր է, որ ՀԱՀ-

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

Հայաստանը փետրվարի գործընթացից հետո անցկացնի լրացուցիչ հավատարմագրում, այն դեպքում, եթե ցանկանա ներգրավել այլ ֆինանսական հաստություններ ևս: Բոլոր ֆինանսական հաստությունների ծախսերի մատրիցաները մատչելի կլինեն հանրության համար և կտեղադրվեն ՀԱՀ-Հայաստանի ինտերնետային կայքում, վարկային ծրագրի բրոշյուրներում՝ որոնք կտրամադրվեն Ջրից դեպի Շուկա ծրագրի կողմից, ինչպես նաև համապատասխան այլ ֆորումների միջոցով:

**2. Ջրից ծրագրի վարկային ծրագրի գումարների տեղաբաշխումը.**

Առաջին փուլի ավարտից հետո կսկսվի տեղաբաշխման գործընթացը /փուլ երկրորդ/: Ստորև նշված կարգով վարկատուները կօգտագործեն տարվա համար առկա գումարները: Ծրագրի գումարները հասանելի կլինեն ըստ առաջարկի, այն է, ով դիմի նա էլ կստանա այն սահմանաչափով, որը նշված կլինի յուրաքանչյուր վարկատուի վարկային պայմանագրում: Բոլոր վարկատուները հավասար հնարավորություն կունենան օգտվելու ծրագրի գումարներից և այդ գումարները շարունակական հիմունքներով հասանելի կլինեն ամբողջ տարվա ընթացքում /բանկերի և վարկային կազմակերպությունների համար նախատեսված չեն առանձին «պատուհաններ»/:

Ծրագրի գումարները ակնկալվում է տեղաբաշխել երեք տարվա ընթացքում հետևյալ կերպ.

Հունվար, 2008-ից սեպտեմբեր, 2008 – 1,500,000 ԱՄՆ դոլար

Հունվար, 2009-ից սեպտեմբեր, 2009 – 5,500,000 ԱՄՆ դոլար

Հոկտեմբեր, 2009-ից սեպտեմբեր, 2010 – 1,500,000 ԱՄՆ դոլար

- ՀԱՀ-Հայաստանը ՀԱԿ-ից գումարներ կստանա պարբերաբար հայտ ներկայացնելով, կախված պահանջից՝ եռամսյակային վավերացմամբ: Պլանավորման նպատակով և վարկատուների հետ խորհրդակցելով ՀԱՀ-Հայաստանը կհաշվարկի տվյալ եռամսյակի համար ակնկալվող գումարի չափը և այդ չափով գումարի փոխանցման հայտ կներկայացնի ՀԱԿ-ին: /Եռամսյակային ֆինանսավորման ժամանակ պետք է հաշվի առնել Հայաստանի գյուղատնտեսական վարկի պահանջարկի սեզոնայնությունը: ՀԱՀ-Հայաստանի կանխատեսումներով եռամսյակային չափաբաժինները չեն գերազանցի 2.0, 2.0 և 1.5 միլիոն դոլարը համապատասխանաբար հետևյալ եռամսյակների համար՝ հունվար-մարտ, ապրիլ-հունիս և հուլիս-սեպտեմբեր/: ՀԱԿ-ն գումարները ՀԱՀ-Հայաստանին կփոխանցի ԱՄՆ դոլարով, վերջինս այն կփոխարկի ՀՀ դրամի և համապատասխան չափով պահանջված գումարը կփոխանցի վարկատուներին: Վարկատուների պարտավորությունները ՀԱՀ-Հայաստանին կլինեն ՀՀ դրամով:
- Վերջնական վարկառուները վարկ ստանալու համար դիմում են իրենց նախընտրած վարկատուին: Վարկատուն կայացնում է վարկի տրամադրման որոշումը և վարկարժան դիմորդների համար կազմում է վարկային փաթեթներ: Վարկատուն ըստ հայեցողության կարող է կամ անմիջապես վճարել վարկի գումարը իր միջոցներով այնուհետև վերաֆինանսավորվել վարկային ծրագրի կողմից այն վարկերի համար, որոնք ՊՖԿ-ի կողմից կհամարվեն ծրագրին համապատասխանող, կամ կարող են դիմել վարկային ծրագրին վարկի գումարի համար և վճարել վարկառուին ֆինանսավորումը ստանալուց հետո: /Այս դեպքում վերաֆինանսավորումը վերաբերվում է վարկատուի սեփական միջոցների վերաֆինանսավորմանը, որը վճարվել է նոր համապատասխան վարկառուին կամ որպես հավելած արդեն ընթացիկ վարկառուի վարկի

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

համար՝ համաձայն ԾՎՔԸ-ի համապատասխան նպատակների/։ Երկու դեպքում էլ վարկատուն ԳՖԿ է ներկայացնում ֆինանսավորման փոխանցման հայտ մեկ կամ մի քանի վարկային փաթեթներով՝ ծրագրին համապատասխանության որոշման համար։

- ԳՖԿ ներկայացված և վերջինիս կողմից համապատասխանող ճանաչված ֆինանսավորման փոխանցման հայտերը ուղարկվում են ՀԱՀ-Հայաստան՝ վճարման առաջարկությամբ։ ՀԱՀ-Հայաստանը ուսումնասիրում է առաջարկությունները և համաձայնության դեպքում հանձնարարում է ֆինանսական գործակալին վճարել գումարները։ Վարկային ծրագրի գումարները առանձին վարկատուներին վճարվում են ըստ եռամսյակային չափաբաժնի մինչև որ վարկային ծրագրի տարեկան հատկացումը սպառվի կամ վերջանա վարկատուի ինստիտուցիոնալ սահմանաչափը, ինչպես նկարագրված է մաս III-ի Գ-ում, որն էլ որ առաջինը տեղի ունենա։ ՀԱՀ-Հայաստանը իրավունք ունի մերժել վարկը՝ հիմնվելով համապատասխանության չափանիշների իր ինտերպրետացիայի վրա։
- Երբ վարկատուները ստանան փոխանցումների գումարները ԳՖԿ-ն յուրաքանչյուր փոխանցման գումարը կմուտքագրի իր հաշվառման համակարգում,՝ որտեղ գրանցվում է բոլոր ՀՀ դրամի և դրան համարժեք ԱՄՆ դոլարի գումարները յուրաքանչյուր վարկատուի համար։ Հաշվառման համակարգում պետք է նշվի նաև՝ 1) վարկատուներից ցանկացածի տվյալ պահի ՀԱՀ-Հայաստանին ընթացիկ պարտքի գումարի չափը, և 2) յուրաքանչյուր ծրագրային տարվա ընթացքում վարկատուների կողմից ստացված գումարների դոլարային համարժեքի հանրագումարը։
- Հատկացման գործընթացը տարվա համար կհամարվի ավարտված հետևյալ երկու դեպքերից մեկի առկայության պարագայում. 1) տարվա համար հատկացված գումարների ամբողջական օգտագործման դեպքում կամ 2) սեպտեմբերի վերջին աշխատանքային օրը։

**Դ. Վարկային ծրագրի իրականացումը և գումարների հոսքը**

Ստորև նկարագրված է վարկային ծրագրի գործառնական գումարների հոսքը։ Մաս II-ի Ե կետում բերված սխեմայում նկարագրված են մասնակիցների և գումարների հոսքի սխեմատիկ փոխհարաբերությունները։

ՀԱԿ-ն վարկային ծրագրին տրամադրել է 1.5 մլն. ԱՄՆ դոլար ծրագրային երկրորդ տարվա ընթացքում, այն է մինչև 2008 թվականի սեպտեմբերի վերջը։ Եվս 5.5 մլն ԱՄՆ դոլար նախատեսված է ծրագրային երրորդ տարվա համար և 1.5 մլն ԱՄՆ դոլար՝ ծրագրային չորրորդ տարվա համար։ Այս գումարները կտրամադրվեն ֆինանսական գործակալի միջոցով տրանշերի տեսքով, հիմնվելով վերջնական վարկառուների պահանջարկի վրա։

Յուրաքանչյուր եռամսյակին նախորդող ամսվա 5-րդ օրը ԳՖԿ-ն վարկատուներից կհավաքի վերջնական վարկառուների գումարի պահանջի կանխատեսումները։ ՀԱՀ-Հայաստանը այս գումարը կներառի ՀԱԿ-ին ներկայացվող իր եռամսյակային վճարման հայտում։

Բոլոր ֆինանսական հաստատությունները, որոնք հավատարմագրման գործընթացից հետո կհամարվեն վարկատուներ հնարավորություն կունենան ՀԱՀ-Հայաստանին դիմելու ֆինանսավորման կամ վերաֆինանսավորման համար /ԳՖԿ-ի միջոցով/ համապատասխանող վարկերի համար։ Վարկատուները ԳՖԿ կներկայացնեն վարկային

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

փաթեթներ ներառող ֆինանսավորման փոխանցման հայտերը և ԳՖԿ-ն կորոշի արդյոք վարկը համապատասխան է չափանիշներին թե ոչ: *ԳՖԿ-ն վարկի հետ կապված ոչ մի վարկային որոշում չի կայացնի, վարկային որոշումը բացառապես վարկատուի պարտականությունն է:* Եթե վարկը չի համապատասխանի ծրագրի չափանիշներին, այն չի ֆինանսավորվի և չհամապատասխանող վարկային փաթեթը կվերադարձվի վարկատուին՝ ներժման պատճառաբանության հետ միասին: Չհամապատասխանող վարկի գումարը կհանվի ֆինանսավորման փոխանցման հայտից և վարկը չի ֆինանսավորվի: Եթե վարկը համապատասխանում է վարկային ծրագրի չափանիշներին ԳՖԿ-ն կառաջարկի այն ֆինանսավորման համար և ֆինանսավորման փոխանցման հայտը կներկայացնի ՅՄՅ-Հայաստանին, որն էլ կուսումնասիրի առաջարկությունը: Եթե ՅՄՅ-Հայաստանը հաստատում է առաջարկը, այն 1) տեղեկացնում է այդ մասին ԳՖԿ-ին և 2) հանձնարարում է ֆինանսական գործակալին փոխանցել վերջնական վարկառուի վարկի ամբողջ գումարը ՀՀ դրամով վարկատուին: ԳՖԿ-ն վարկատուին տեղեկացնում է հաստատման մասին, այնպես որ վերջինս կարողանա նախապատրաստել փաստաթղթերը՝ գումարը ստանալուն պես վարկը արագ տրամադրելու համար:

Ֆինանսական գործակալը ՅՄՅ-Հայաստանի հանձնարարմամբ վարկատուներին կփոխանցի գումարները: Վարկատուները պետք է վարկի ուսումնասիրման համար 5 ամբողջ օր տրամադրեն՝ ԳՖԿ-ին /3/ և ՅՄՅ-Հայաստանին /2/: Ֆինանսական գործակալը ՅՄՅ-Հայաստանի կողմից տեղեկացվելուց 30 օրվա ընթացքում պետք է կատարի վճարումը, սակայն խնդրվել է նրանից հնարավորինս արագացնել այդ գործընթացը: ՅՄՅ-Հայաստանից գումարները ստանալուց հետո վարկատուները կունենան 20 օրացուցային օր, որպեսզի գումարը տրամադրեն վերջնական վարկառուին կամ վերադարձնեն այն ՅՄՅ-Հայաստանին: Այն գումարների համար, որոնք աշխատանքային 20-րդ օրվա ավարտին վերադարձված չեն լինի, կկիրառվի 12% տուգանք, որը կավելացվի 4% հիմնական տոկոսադրույքին, կազմելով ընդհանուրը 16%: Երկու տոկոսադրույքն էլ կհաշվարկվեն վարկատուի կողմից գումարը ստանալու օրվանից մինչև ՅՄՅ-այաստանին վերադարձնելու օրը:

Եթե վարկատուն չի գրկվել իր իրավունքներից, նա իրավասու կլինի շրջանառել գումարները, որոնք կստանա վերջնական վարկառուից և նոր համապատասխանող վարկեր կտրամադրի: Ասպիսով վարկատուի վերցրած գումարների մարումներից կզոյանա շրջանառու ֆոնդ, որը նույնպես պետք է տրամադրվի ՋԴՇ նպատակային վերջնական վարկառուներին: Վարկատուն պետք է ԳՖԿ-ին ներկայացնի մարումների գումարով տրամադրված նոր վարկերի փաստաթղթերը՝ որպեսզի վերջինս ստուգի դրանց համապատասխանությունը և շրջանառու ֆոնդի մնացորդը ամսվա վերջի դրությամբ չպետք է գերազանցի 8.5 միլիոն ՀՀ դրամը: Մարման գումարներից ֆինանսավորվող ցանկացած վարկի համար կիրառելի առավելագույն տոկոսադրույքը և վճարները կլնեն այնքան, որքան նշված է վարկատուի է ՅՄՅ-Հայաստանի միջև կնքված վերջին վարկային պայմանագրի մեջ: Եթե վերջին ստորագրված պայմանագիրը 2008թ.-ի ապրիլի 9-ի պայմանագիրն է, ապա կիրառելի առավելագույն տոկոսադրույքը կհամարվի այնտեղ նշված հիմնական տոկոսադրույքին /4%/ գումարած այն սփռվածքը, որը նշված է պայմանագրին կից տեղաբաշխման ծանուցման մեջ: Այն վարկատուների համար, որոնք ապրիլի 9-ից սկսած ունենին մի քանի տարբեր սփռվածք, կիրառելի սփռվածքը կհամարվի դրանց միջինացվածը: Նախկին չորս վարկատուների հետ ՅՄՅ-Հայաստանը կամ կկնքի նոր վարկային պայմանագրեր, կամ կկատարի առկա՝ 2008թ.-ի ապրիլի 9-ին կնքած վարկային պայմանագրերի փոփոխություններ /կորոշվի իրավաբանական խորհրդի կողմից/ այնպես, որ դրանք համապատասխանեն ԾՎԹԸ-ի վերանայված և փոփոխված տարբերակին:

Վարկատուները եռամսյակը մեկ կկատարեն վարկային ծրագրի ընթացիկ վարկերի մնացորդի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի վճարում ֆինանսական գործակալի կողմից վերահսկվող ՅՄՅ-Հայաստանի բանկային հաշվին: Տոկոսագումարները կհաշվեգրվեն օրացուցային եռամսյակի կտրվածքով և ժամկետանց վճարումներից խուսափելու համար վճարումները պետք է կատարվեն բանկային հաշվին

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---


ոչ ուշ քան եռամսյակին հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը: ԳՖԿ-ն եռամսյակային կտրվածքով վարկատուներին կժամուցի վճարման ենթակա տոկոսագումարի հաշիվը: ԳՖԿ-ն այդ ծանուցման պատճենները կուղարկի և ՅՄՅ-Յայաստանին և ֆինանսական գործակալին: Վարկատուն պետք է տոկոսագումարի վճարումը կատարի էլեկտրոնային փոխանցումով այն հաշվեհամարին, որը բացել է ֆինանսական գործակալը ՅՄՅ-Յայաստանի համար: ՅՄԿ-ի ընթացիկ պահանջով տոկոսագումարը կուղարկվի ԱՄՆ Գանձապետարան: Ֆինանսական գործակալը պետք է տեղյակ պահի ՅՄՅ-Յայաստանին, ՅՄԿ-ին և ԳՖԿ-ին թե երբ է կատարվել տոկոսագումարի վճարումը և տրամադրի մուծման փաստացի տվյալներ:

ՅՄՅ-Յայաստանի վարկատուներին տրամադրած վարկերի ժամկետը կլրանա ծրագրի ավարտին և կվճարվի ՅՄՅ-Յայաստանին կամ նրա կողմից նշանակված վստահված կամ լուծարման գործակալին /մաս VII/:

ՋրՇ վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերը ենթակա են հետագա ստուգման և մոնիտորինգի: Եթե վճարումից հետո պարզվում է, որ վարկը համապատասխանող չէ, ըստ վարկային պայմանագրի այն կհամարվի պարտավորությունների խախտում, եթե չուղղվի հետևյալ չորս տարբերակներից մեկի միջոցով.

- ուղղել անհամապատասխանությունը և ԳՖԿ-ին ներկայացնել բավարար ապացույցներ այն մասին, որ վարկը համապատասխանում է վարկավորման քաղաքականության պահանջներին, կամ
- ԳՖԿ-ին ներկայացնել շեղման բացատրություն և ներկայացնել բացառության հայտ, և 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ԳՖԿ-ից ստանալ պատասխան բացառության վերաբերյալ, կամ
- փոխարինել տվյալ հայտը մեկ կամ մի քանի այլ, ֆինանսավորման համար համապատասխանող վարկի հայտ/եր/ով և ներկայացնել մի ընդհանուր գումարի հայտ, որը գոնե հավասար կլինի չհամապատասխանող վարկի գումարին, կամ
- 10 աշխատանքային օրվա ընթացքում չհամապատասխանող վարկի դիմաց հատկացված վարկային ծրագրի գումարը վերադարձնել ՅՄՅ-Յայաստանին: Նման ձևով վերադարձված գումարները կարող են հետագայում նորից տրամադրվել վարկատուներին՝ համապատասխանող վարկեր տրամադրելու համար:

**Ե. Վարկային ծրագրի կառավարման կառուցվածքը, հաշվետվություն և դրամական միջոցների հոսքը**



**Զ. Վերահսկողություն, կառավարում և հաշվետվություն**

ՅՄԳ-Յայաստանը կրում է Ջրից վարկային ծրագրի գումարների կառավարման ողջ պատասխանատվությունը: Այն կարգավորված կերպով կվավերացնի այդ գումարների փոխանցումը վարկատուներին՝ հիմնվելով ԳՖԿ-ի առաջարկությունների վրա, որն էլ իր հերթին հիմնված է վարկային փաթեթների ստուգման վրա, որը պետք է ներառի վարկատուների վավերացումը այն մասին, որ վարկային փաթեթը համապատասխանում է ՅՄԳ-Յայաստանի պահանջներին: Պարտականությունները ներառում են՝

- Վերահսկել ԳՖԿ-ին Ջրից վարկային ծրագրի բոլոր ասպեկտներում, ներառյալ ԳՖԿ-ի համապատասխանության երաշխավորումը Իրականացնող կառույցի պայմանագրի հետ:
- Վերլուծել ԳՖԿ-ի կողմից ներկայացված ծրագրի իրականացման և կառավարման վերաբերյալ հաշվետվությունները:
- Կատարել դաշտային այցելություններ Ջրից վարկային ծրագրի գործընթացները ստուգելու նպատակով /ներառյալ թե վարկատուներին, թե վերջնական վարկառուներին/:
- Պատրաստել և ՅՄԿ-ին ու կառավարման խորհրդին պարբերաբար ներկայացնել վարկային գործընթացների վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ /կազմված ԳՖԿ-ի կողմից/:
- Պատրաստել և ՅՄԿ-ին ներկայացնել բոլոր այն հաշվետվությունները, որոնք պահանջում է ծրագիրը պայմանագրի համաձայն:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

- Ձեռք բերել և վճարել բոլոր վարկատուների ՋԴՇ վարկային ծրագրի հաշիվների տարեկան անկախ աուդիտի /նաև ԳՖԿ-ին աուդիտ անելու/ համար:

ՀՄՀ-Հայաստանը կարող է հաստատել սույն Ծրագրի վարչական քաղաքականության և ընթացակարգերի ուղեցույցում ներառված վերջնական վարկառուին տրամադրվող վարկերի մինչև 10 բացառություն /ներառյալ 10.5 միլիոն ՀՀ դրամից մեծ վարկերը/ այն դեպքերում, երբ վարկատուն պահանջում է այդպիսի բացառություն և ԳՖԿ-ն առաջարկում է նույնը: Վարկատուն կարող է առաջարկել այդ բացառությունը ԳՖԿ-ին, որն էլ կորոշի, արդյոք այդպիսի բացառությունը ընդունելի է թե ոչ: Եթե ԳՖԿ-ն հաստատի այս բացառությունը, ապա դրանից հետո ԳՖԿ-ն պետք է այն առաջարկով ներկայացնի ՀՄՀ-Հայաստանին: ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ-ն լիազորված է հաստատել մինչև 17 միլիոն ՀՀ դրամի բացառությունները: 17 միլիոն ՀՀ դրամից մեծ գումարների դեպքում կպահանջվի Կառավարման խորհրդի հաստատումը և ՀՄԿ-ի առարկությունների բացակայությունը: Ցանկացած բացառության մասին պետք է անհապաղ զեկուցվի Կառավարման խորհրդին և ՀՄԿ-ին: Բնապահպանական ոչ մի անհամապատասխանության բացառություն չի թույլատրվի: Բոլոր հաստատված բացառությունները, անկախ դրանց սահմանաչափից, պետք է առածին առանձին ուսումնասիրվեն որպես տարեկան անկախ աուդիտի մի մաս:

**ԳՖԿ-ի և վարկատուների պարտականությունները և և պարտավորությունները**

ՀՄՀ-Հայաստանը կփոխանցի հետևյալ պարտականությունների վերահսկողությունը նաև ԳՖԿ-ին և վարկատուներին և նրանց կողմից վերահսկման, կառավարման և հաշվետվության աջակցություն կստանա հետևյալ ձևով՝

**1. ԳՖԿ-ն՝**

- ՀՄՀ-Հայաստանի անունից վերահսկելու է վարկատուներին, Ծրագրի վարչական քաղաքականությանը և ընթացակարգերին նրանց համապատասխանության համար,
- կկատարի պատահական դաշտային այցելություններ՝ հանդգնելու, որ վերջնական վարկառուին տրվող վարկերը համապատասխանում են Ծրագրի վարչական քաղաքականությանը և ընթացակարգերին,
- կպահպանի ՀՄՀ-Հայաստանի վարկային ծրագրի շրջանակներում տրված ՀՄԿ-ի դրամական միջոցների վարկային գրանցումները և հաշվառումը,
- կպատրաստի և ՀՄՀ-Հայաստանին կներկայացնի հաշվետվություններ:

**2. Վարկատուները՝**

- կգնահատեն վերջնական վարկառուի նախնական համապատասխանության չափանիշները և հաշվետվություն կներկայացնեն ԳՖԿ-ին հետագա որոշումների կամ ցանկացած անհամապատասխանության հայտաբերման վերաբերյալ,
- ԳՖԿ-ին հաշվետվություններ կներկայացնեն ՋԴՇ վարկային ծրագրի վարկերի վերաբերյալ:

ՋԴՇ խորհրդատուն խորհրդատվական աջակցություն կտրամադրի ինչպես ԳՖԿ-ին, այնպես էլ ՀՄՀ-Հայաստանին՝ վարկային ծրագրի իրականացման և կառավարման ողջ ընթացքում:

### **III. ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐ – ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ**

#### **Ա. Համապատասխանության չափանիշներ**

Սույն համապատասխանության չափանիշները ուրվագծում են այն պահանջները, որոնց պետք է համապատասխանեն կամ գերազանցեն հետաքրքրված ֆինանսական հաստատությունները՝ մասնակցության համար համապատասխանող լինելու և վարկատու համարվելու համար: ՀԱՅ-Հայաստանը հիմնվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկերի և վարկային կազմակերպությունների վերահսկման և լիցենզավորման վրա՝ հավատարմագրման դիմած յուրաքանչյուր հաստատության ֆինանսական վերլուծության /due diligence/ փոխարեն: ՀԱՅ-Հայաստանը և/կամ նրա կողմից լիազորված անձը պարբերաբար մոնիտորինգ կանցկացնի կամ կստուգի բոլոր ընտրված վարկատուներին՝ համոզվելու համար, որ վերջիններս շարունակում են համապատասխանել ծրագրի չափանիշներին: Յուրաքանչյուր վարկատու կամ հետաքրքրված ֆինանսական հաստատություն պետք է՝

- լիցենզավորված լինի և գործի բանկային բոլոր օրենքների և կանոնակարգերի համաձայն,
- ընդունի և համապատասխանի ՀԱՅ-Հայաստանի վարկային ծրագրի շրջանակներում ՀԱՅ-Հայաստանի և վարկատուի միջև կնքվող վարկային պայմանագրի պայմանները, և
- պատրաստակամ լինի սպասարկելու Հայաստանի գյուղատնտեսական ոլորտը և գլխավորապես Ջրից դեպի Շուկա ծրագրի դասընթացն ավարտած շահառուներին, կանոնավոր կերպով ամսական առնվազն երեք անգամ ներկայացնել մարզերում ՋԴՀ վարկային ծրագրի շրջանակներում իրականացրած իրենց գործունեությունը Ջրից դեպի Շուկա ԲԳ և ՋՆԿ դասընթացների ժամանակ:

ՀԱՅ-Հայաստանը խրախուսում է վարկավորումը բոլոր մարզերում: Վերջինս կհավաքի տեղեկատվություն յուրաքանչյուր վարկատուի տարեկան տրամադրած վարկերի թվի և գումարի /ՀՀ դրամով/ վերաբերյալ ըստ մարզերի:

Վարկային ծրագրին մասնակցելու համար դիմելիս, կազմակերպությունները պետք է տրամադրեն իրենց վերջին աուդիտ անցած ֆինանսական հաշվետվության պատճեն կից ծանոթագրություններով, ինչպես նաև ընթացիկ տարվա առկա եռամսյակային ֆինանսական այն հաշվետվությունները, որոնք հրապարակման ենթակա են: ՀԱՅ-Հայաստանը կամ Կառավարման խորհուրդը, հիմնվելով աուդիտորական եզրակացության կամ եռամսյակային հաշվետվության ուսումնասիրության վրա, իրենց հայեցողությամբ կարող են որոշել տվյալ ֆինանսական հաստատությանը չընդունել որպես վարկատու այն դեպքում, եթե ներկայացված փաստաթղթերում առկա լինի բացասական տեղեկատվություն: Սա վերաբերում է ինչպես որպես սկզբնական դիմելիս, որպես վարկատու ընտրվելու համար, այնպես էլ ծրագրին շարունակական մասնակցության համար:

#### **Մասնակցության ուղեցույց**

ՀԱՅ-Հայաստանը ծրագրում է բոլոր համապատասխանող և հետաքրքրված բանկերին ու ՈՒՎԿ-ներին առաջարկել վարկային ծրագրի շրջանակներում որպես վարկատու հավատարմագրվելու հնարավորությունը: Վարկատուները, որոնք կստորագրեն ՀԱՅ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագիրը համապատասխան կլինեն ստանալու ՋԴՀ վարկային ծրագրի գումարները՝ վերջնական վարկառուներին վարկավորելու նպատակով՝ համաձայն ԾՎԶԸ-ում և վարկային պայմանագրում տեղ գտած ֆինանսավորման փոխանցման հայտի: Գումարները կտրամադրվեն «առաջինը պահանջողին» սկզբունքով: Հավատարմագրման և տեղաբաշխման գործընթացները նկարագրված են մաս II-ի Գ-ում:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

**Վարկեր վարկատուներին**

ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագիրը կներկայացնի այն դրույթներն ու պայմանները, որոնցով պետք է ուղղորդվեն վարկատուները վարկային ծրագրի ներքո գումարներ փոխառելու համար: Յուրաքանչյուր մասնակցի գումարի սահմանաչափը սահմանվում է ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրով ընթացիկ վարկերի գումարի չափով: Գոյություն ունի երկու սահմանաչափ, որը կիրառվում է վարկատուների նկատմամբ և այն սահմանաչափը, որը ամենափոքր նվազագույնը կլինի, այն կհամարվի կիրառելի: Առաջինը, դա այն սահմանաչափն է, որը վերաբերվում է վարկատուի ընդհանուր կապիտալին, այն է, ՀԱՀ-Հայաստանից փոխառած ընթացիկ գումարը չպետք է գերազանցի վարկատուի վերջին աուդիտ արված ֆինանսական հաշվետվության մեջ գրանցված ընդհանուր կապիտալի կրկնապատիկը: Վարկատուների ֆինանսական կարողությունների մակարդակները շատ տարբեր են և ՀԱՀ-Հայաստանը այս սահմանաչափը օգտագործում է որպես ռիսկի կառավարման գործիք, որով կորոշվի յուրաքանչյուրին տրամադրվելիք գումարների առավելագույն չափը: Գործում է նաև երկրորդ սահմանաչափը՝ դա երկու միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամն է: ՀԱՀ-Հայաստանը կարող է իր հայեցողությամբ փոխել այս սահմանաչափը, եթե գտնի, որ դա անհրաժեշտ է ծրագրին: Կոնկրետ օրինակ. վարկատուի վերջին աուդիտ արված ֆինանսական հաշվետվությունը ցույց է տալիս, որ այն ունի 750 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի ընդհանուր կապիտալ: Այս վարկատուն կարող է ՀԱՀ-Հայաստանի գումարներից ստանալ 1 500 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ առավելագույն գումար: Եթե այդ նույն վարկատուի հաջորդ աուդիտ արված ֆինանսական հաշվետվությունը ցույց տա, որ ընդհանուր կապիտալը 1 200 000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ է, ապա այս դեպքում կկիրառվի 2 000 000 ԱՄՆ դոլարի սահմանաչափը և ոչ թե 2 400 000 դոլարը՝ ընդհանուր կապիտալի կրկնապատիկը:

Վարկային պայմանագիրը կուղղորդի ՀԱՀ-Հայաստանի և վարկատուների միջև փոխառության և վարկավորման գործընթացները: Վարկային պայմանագրի դրույթների և պայմանների հիմնական շրջանակի համար առաջարկվում է հետևյալը, որը որպես վարկային պայմանագրի ձև ներկայացված է Հավելված III-ում:

Վարկատուն ամբողջությամբ պատասխանատու կլինի ՀԱՀ-Հայաստանի կողմից վարկային ծրագրի միջոցներով տրամադրված ցանկացած վարկի ամբողջական մարման համար, անկախ այն փաստից, թե տվյալ վարկը ինչպիսի մարման կամ իրականացման կարգավիճակում է վերջնական վարկառուի կողմից: Վարկային ծրագրի շրջանակներում վարկեր տրամադրելիս վարկատուները պետք է հիմնվեն իրենց առողջ դատողության, վարկառուի վստահելիության/վճարունակության ստուգման և վարկային վերլուծության վրա: Վարկատուն պետք է ընդունի վարկառուի բոլոր ֆինանսական կամ այլ ռիսկերը և ՀԱՀ-Հայաստանին ձերբազատի ցանկացած պատասխանատվությունից կամ պարտավորությունից:

Վարկային գումարները բացառապես նախատեսված են Հայաստանում ֆերմերների և գյուղատնտեսությանն առնչվող ձեռնարկությունների վարկավորման համար: Վարկատուներին տրամադրվող վարկերը հիմնված կլինեն ԳՖԿ-ին ներկայացված վարկային փաթեթների համապատասխանության վրա: Համապատասխանող վարկերի առավել ամբողջական նկարագրությունը բերված է մաս IV-ում՝ Վերջնական վարկառուներ – համապատասխանության և մասնակցության պահանջներ: Վարկային բոլոր գումարները, որոնք կփոխառվեն վարկային ծրագրի շրջանակներում պետք է համապատասխանեն վարկատուների կողմից վերջնական վարկառուներին տրամադրված կոնկրետ վարկերին:

Տոկոսների հաշվեգրումը կկատարվի վարկատուին փոխանցված յուրաքանչյուր վարկի գումարի նկատմամբ գումարի ստացման օրվանից մինչև վարկի ամբողջական մարումը՝ հիմնական տոկոսադրույքի չափով /տարեկան ֆիքսված 4%/: Տոկոսը կհաշվարկվի *պարզ հիմքով*՝ 365/366 օր տարվա կտրվածքով: Մայր գումարը պետք է մարվի վարկային

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

պայմանագրի ավարտման ժամկետում կամ պարտականությունների չկատարման դեպքում:

Վերջնական վարկառուներից ստացված մայր գումարի մարումները կհաշվառվեն վարկատուի շրջանառու ֆոնդում և կօգտագործվեն վարկային ծրագրի սահմաններում նոր համապատասխանող վարկերի տրամադրման համար: Վարկատուները պետք է անհապաղ օգտագործեն մայր գումարի մարումները նոր վարկեր տրամադրելու նպատակով: Վարկատուները պետք է վարկերի մարումներից կուտակված գումարների առկայության դեպքում առաջնահերթ օգտագործեն նոր վարկեր տրամադրելու համար, նախքան ՀԱՀ-Հայաստանից նոր գումար պահանջելը: Յուրաքանչյուր օրացուցային ամսվա ընթացքում վարկատուները պետք է շրջանառու ֆոնդից այնքան գումար օգտագործեն նոր համապատասխանող վարկեր տրամադրելու համար, որ ամսվա վերջի դրությամբ շրջանառու ֆոնդի գումարները չգերազանցի 8.5 միլիոն ՀՀ դրամը: Եթե երկու ամիս շարունակ վարկատուի ամսվա վերջի շրջանառու ֆոնդի մնացորդը գերազանցի 8.5 միլիոն ՀՀ դրամը, այդ երկու ամիսներից յուրաքանչյուրի ամսվա վերջի շրջանառու ֆոնդի մնացորդի վրա կհաշվարկվի տուգանք՝ 12% տոկոսադրույքով, որը պետք է վճարվի ՀԱՀ-Հայաստանին: /Տուգանքի չափը հաշվարկվում է այն ավելացնելով 4% հիմնական տոկոսադրույքին և կկիրառվի ամբողջ ամսվա համար: Այսինքն վարկատուն կվճարի 16% այդ գումարի դիմաց:/ Այն դեպքում, երբ վարկատուի շրջանառու ֆոնդի ամսվա վերջի մնացորդը չորս ամիս շարունակ գերազանցի 8.5 միլիոն ՀՀ դրամը, վարկատուն ստիպված կլնի շրջանառու ֆոնդի ողջ գումարը ետ վճարել ՀԱՀ-Հայաստանին: Այդ ձևով հետ վճարված գումարները հասանելի կլինեն վարկատուին Ֆինանսավորման փոխանցման հայտի շրջանակներում նոր համապատասխան վարկեր տրամադրելու համար:

Վարկատուն պետք է իր հաշվառման համակարգում ունենա նպատակային հաշվի համար /«Վարկատուի հաշվեհամար»/, որտեղ կգրանցվեն վարկային ծրագրի շրջանակներում կատարված բոլոր վարկային գործողությունները: Վարկատուները կպահպանեն համապատասխան գրանցումները և հաշիվները՝ վարկային ծրագրի աշխատանքները /ՀԱՀ-Հայաստանից ստացած վարկային փոխանցումներ, վերջնական վարկառուներին տրամադրված վարկեր, դրանց մարումները և հետագա նոր վարկերի ֆինանսավորում/ պատշաճ հաշվապահական փորձին համապատասխան ներկայացնելու համար: Վարկատուները իրենց հաշվապահական հաշվետվությունների համակարգերում պետք է ստեղծեն համապատասխան հաշվապահական կոդեր՝ վարկային ծրագրի շրջանակներում վերջնական վարկառուներին տրամադրված վարկերի հատուկ իդենտիֆիկացիայի համար:

Վարկատուները պետք է ունենան այնպիսի ֆինանսական կառավարման համակարգ, որը կհամապատասխանի վարկային ծրագրի տեղեկատվության, հաշվապահության և հաշվետվության բոլոր պահանջներին: Մասնավորապես, վարկատուները համաձայն են՝

- ՋՂՇ վարկային ծրագրի համար պահպանել պատշաճ հաշվապահական պրակտիկային համապատասխանող գրանցումներ և հաշվեհամարներ, որոնք կարտացոլեն վարկատուների գործառնությունները և ֆինանսական վիճակը,
- յուրաքանչյուր ֆինանսական տարի աուդիտի ենթարկել իրենց ֆինանսական փաստաթղթերը /հաշվապահական հաշվեկշիռ, եկամտի և ծախսումների մասին հաշվետվություններ և այլ առնչվող հաշվետվություններ/, համաձայն Աուդիտի միջազգային չափանիշների պահանջների,
- ՀԱՀ-Հայաստանին կամ նրա վստահված անձին հնարավորինս շուտ, ֆինանսական տարվա ավարտից վեց ամսից ոչ ուշ, տրամադրել աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների և հաշիվների վավեր պատճենները,
- ՀԱՀ-Հայաստանին կամ նրա վստահված անձին պահանջի դեպքում տրամադրել վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող ֆինանսական գործարքների վերաբերյալ նմանատիպ այլ տեղեկատվություն:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

ՀՄՀ-Հայաստանի՝ ՋԴՇ վարկային ծրագրի շրջանակներում իրականացված գարծարքների ֆինանսական տարվա համար արված աուդիտի հաշվետվությունները ստանալուց հետո առնվազն մեկ տարի վարկատուները պետք է պահպանեն ՋԴՇ վարկային ծրագրից ստացած բոլոր գումարների և վերջնական վարկառուներին տրամադրած բոլոր վարկերի վերաբերյալ գրանցումները:

ՀՄՀ-Հայաստանի հայեցողությամբ և ըստ ՀՄԿ պայմանագրի 3.8 բաժնի՝ Գրանցումներ և տեղեկատվություն. Մատչելիություն, աուդիտ և վերստուգում, վարկատուների հաշվիները կենթարկվեն աուդիտի:

**Բ. Վարկի վավերացում և հաստատում**

Վարկատուները պետք է հետևեն գյուղատնտեսական և առևտրային վարկավորման համար գործող հուսալի երաշխավորման պրակտիկային: Համապատասխանող վերջնական վարկառուների վարկի վավերացումը և հաստատումը պատկանում է վարկատուներին: ՋԴՇ վարկային ծրագրի շրջանակներում նման վարկերի վերաֆինանսավորում ստանալու համար վարկատուները պետք է լրացնեն և ԳՖԿ-ին ուղարկեն ՀՄՀ-Հայաստանի ստանդարտացված Վարկային փաթեթի ամփոփաթեթը /«Վարկային պայմանագրի ձև»-ին կցված Հավելում 3, որը այստեղ ներկայացվում է որպես Հավելված III/ և կցեն այն փաստաթղթերը, որոնք ներկայացված են ամփոփաթեթի կետ 5-ում և 16-ում /այն վարկերը, որոնք վերաֆինանսավորմամբ չեն տրվում, վարկի վերջում պետք է տրամադրել վարկային պայմանագրի և ապահովման պայմանագրի ստորագրված օրինակները/: Վարկային փաթեթը պետք է ներառի առնվազն հետևյալ փաստաթղթերը.

- Վարկառուի և բիզնեսի վերաբերյալ անցյալի, ներկայիս, ընդհանուր և հիմնական տեղեկատվություններ և կապ հաստատելու տվյալներ,
- Վարկատուի կողմից իրականացված վարկի վերլուծության ձև, դա կարող է լինել վարկատուի կողմից օգտագործվող այն ձևը, որը օգտագործվում է վարկային որոշումներ կայացնելու համար /հիմնված վարկատուի ներքին քաղաքականության/ընթացակարգերի վրա/ օրինակ, սկորինգի ձևը կամ դիմումի և վերլուծության ձևը,
- Բնապահպանական հարցաթերթը և ստուգաթերթը:

**Գ. Վարկային փաստաթղթեր**

Վարկատուն ամբողջական պատասխանատվություն և պարտավորություն է կրում վարկերի պատշաճ փաստաթղթերի ձևակերպման համար: Վարկային փաստաթղթերը պետք է.

- Օրինական կերպով գրանցեն վարկի տրամադրումը,
- Ցուցադրեն վարկառուի վարկի մարման ունակությունը,
- Ներկայացնեն պատշաճ գրավի ապահովության ապացույց,
- Գրանցեն վարկառուի գործունեության մոնիտորինգը,
- Ներառեն վարկառուի բնապահպանական հարցաթերթը և վարկատուի ստուգաթերթը,
- Վարկային պայմանագրի մեջ ներառեն դրույթ այն մասին, որ վարկը տրված է ՀՄՀ-Հայաստանի վարկային ծրագրի շրջանակներում և ՀՄՀ-Հայաստանը կամ իր կողմից նշանակված անձը կարող են ստուգել կամ վերահսկել վարկառուի գործնական աշխատանքները,
- Պարտավորությունների չկատարման դեպքում թույլ տալ վարկը փոխանցել ՀՄՀ-Հայաստանին կամ նրա գործակալներին:

**Դ. Վարկի հաստատման և վճարման փաստաթղթեր**

Վարկատուն պետք է լրացնի «Վարկային փաթեթի ամփոփաթեթի» բոլոր կետերը /«Վարկային համաձայնագրի ձև»-ին կցված Հավելում 3, որը այստեղ ներկայացված է որպես Հավելված III/, և ներառի այդ ամփոփաթեթի 5-րդ և 16-րդ կետերում նշված բոլոր փաստաթղթերի պատճենները: Ամբողջական վարկային փաթեթը չտրամադրելու դեպքում վերաֆինանսավորման հայտը կարող է մերժվել: Վարկատուի անսակաւ տրամադրվող տվյալներում /տես մաս V՝ Մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում/ պետք է նշվի վերջնական վարկառուին գումարի տրամադրման կոնկրետ օրը:

**Ե. Վարկային փաստաթղթերի փաթեթ**

Վարկատուն պետք է կանոնավոր և պատշաճ ձևով պահպանի և թարմացնի ՋԴՇ վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի վարկային փաստաթղթերի փաթեթները: Դրանք պետք է ներառեն՝

- Վարկային որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ,
- Այլոց համար անհրաժեշտ տեղեկատվություն, եթե կարիք լինի աջակցել տվյալ հաճախորդին կամ պատասխանել վարկային հարցումներին,
- Վարկառուի և վարկատուի միջև հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություններ, որոնք բավական կլինեն աուդիտի համար,
- Բնապահպանական հարցաթերթը և փաստաթղթերը,
- Վարկի հաստատման բոլոր փաստաթղթերը, ներառյալ բայց չսահմանապակվելով հետևյալով՝
- Վարկի ներկայացում,
- Ֆինանսական հաշվետվություններ,
- Դաշտային այցելությունների կամ ստուգումների հաշվետվություններ,
- Վարկառուի գործունեության վերաբերյալ հուշագրեր կամ այլ տեղեկություններ, ներառյալ գումարի հավաքագրման ջանքերը,
- Երաշխավորագրեր և այլ առնչվող ֆինանսական տեղեկատվություններ երաշխավորողի վերաբերյալ:

**IV. ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐ – ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

**Ա. Նպատակ**

Վարկային ծրագիրը նպատակ ունի աջակցել մատչելի և երկարաժամկետ վարկերի տրամադրմանը ՋԴՇ դասընթացները անցած ֆերմերներին և գյուղատնտեսության հետ կապված բիզնեսներին, որոնք նպատակաուղղվելու են բարելավված ոռոգման և բարձրարժեք գյուղատնտեսության ոլորտում կատարվող կապիտալ ներդրումներին: Այն նաև նպատակ ունի խթանել հանդուրժողականությունը չափավոր վարկային ռիսկերի նկատմամբ, հիմնվել ինչպես գրավի այնպես էլ վերջնական վարկառուի դրամական միջոցների հոսքի վրա, ինչպես նաև քաջալերել վերջնական վարկառուի վարկային կարիքների բավարարմանն ուղղված նորարարական մոտեցումների ներդրումը: Ակնկալվում է, որ վարկային ծրագիրը կօգնի վարկատուներին զարգացնել երկարատև, որակյալ և փոխշահավետ հարաբերություններ, ինչպես նաև ընդլայնել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող ֆինանսական ծառայությունների շրջանակը:

**Բ. Համապատասխան վարկավորման նպատակներ**

Վարկային ծրագրի գումարները նախատեսված են ցանկացած արդյունավետ գյուղատնտեսական նպատակների /կապված ՋԴՇ ծրագրող խրախուսվող բարձրարժեք գյուղատնտեսության մշակաբույսերի և տեխնոլոգիաների հետ/ կամ գյուղատնտեսությանն ուղղակիորեն առնչվող ցանկացած գործունեության ֆինանսավորման համար, Հայաստանի այն բոլոր մասերում, որոնք ներգրավված են ՀԱՅ-Հայաստանի Ռոզովոլ գյուղատնտեսության ծրագրի մեջ: Նման նպատակները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալով.

**ՋԴՇ ծրագրի կողմից խրախուսվող բարձրարժեք գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրությունը.**

Ջերմատների և դրանց ինտեգրալ բաղադրիչների՝ ինչպիսիք են ջեռուցման և օդափոխության համակարգերը, տեղադրում/հիմնում, ընդլայնում կամ վերանորոգում:

Ջրի ներտնտեսային կառավարման և ոռոգման տեխնոլոգիաներ, ներառյալ՝

- կաթիլային ոռոգման համակարգեր ջերմատների, պտղատու և խաղողի այգիների, բաց դաշտում աճեցվող մրգերի և բանջարեղենների համար,
- անձրևացման ոռոգման համակարգեր, մասնավորապես միկրոանձրևացման,
- սիֆոններ, կարճ խողովակներ, փականներով խողովակ, հիդրանտներով խողովակ,
- ճկուն խողովակով ոռոգման համակարգեր,
- հողային հունով առուների երեսպատում,
- Գումարային գոլորշիացման չափիչներ,
- հողի խոնավության չափիչներ/տվիչներ

Պտղատու և խաղողի այգիների, տնկարանների հիմնում, վերանորոգում կամ ընդլայնում, ներառյալ՝

- տնկիներ,
- արմատակալեր,
- խաղողի արմատակալեր,
- շալերային համակարգեր /հեմասյուններ և լարեր/, ծածկում և ստվերարկում

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

Գյուղատնտեսական սարքավորումների նորացում /արդիականացում/, ներառյալ ստորև նշվածների ձեռք բերումը՝

- նոր տրակտորներ /մինչև 3 տարվա հնություն ունեցող/,
- վար անող սարքավորումներ,
- ցանք անող սարքավորումներ,
- սրսկիչներ,
- բերքահավաքի սարքավորումներ,
- հողի լազերային հարթեցուցիչներ

**Յետբերքահավաքային գործընթացներ, վերանշակում և մարկետինգ դաշտում և դաշտից դուրս**

Աթերման և համախմբման կենտրոնների հիմնում և/կամ ընդլայնում:

Սառնարանային պահեստներ, սորտավորման, տեսակավորման, փաթեթավորման և չորացման կառույցներ և սարքավորումներ, ներառյալ սենդվիչային պանելները, օդափոխության համակարգերը, պահեստավորման կոնտեյներները:

Վերանշակման հոսքագծեր և սարքավորումներ:

Սառնարանային և ոչ-սառնարանային բեռնատարներ, եղանով ամբարձիչներ:

Սննդի անվտանգության բարելավմանն ուղղված վերանորոգման ծախսեր, որակի կառավարման համակարգերի ներդրումներ և սերտիֆիկացիա /HACCP, ISO/:

Թարմ միրգ-բանջարեղենի վաճառքի տաղավարներ:

**Այլ ագրոբիզնեսներ**

Մեքենաների կապալի և սպասարկման ոլորտի այլ բիզնեսներ, որոնք աջակցում են փոքր սեփականատերերին:

Ագրոբիզնեսի շուկայավարման և արտահանման ծառայություններ:

Սովորաբար միայն շրջանառու միջոցների համար վարկերը չեն ֆինանսավորվում /տես ստորև բերված բացառությունը/: Ինչևէ, ներդրման նպատակի հետ կապված շրջանառու միջոցների ֆինանսավորումը կարող է ներառվել որպես վերջնական վարկառուի վարկի բաղկացուցիչ մաս այն պայմանով, որ շրջանառու միջոցների համար հատկացվող գումարը չպետք է գերազանցի վերջնական վարկառուին տրամադրվող վարկի ամբողջ գումարի 20%-ը:

Վարկերը, որոնք դիտվում են որպես «դիլլերների ֆինանսավորում» կամ արժեշղթայի ֆինանսավորման վարկեր, որոնք անմիջականորեն առընչվում են Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Բարձրարժեք գյուղատնտեսություն բաղադրիչի կամ Յետբերքահավաքային վերանշակման և մարկետինգի բաղադրիչի ցուցադրումների և այլ աջակցող գործընթացների հետ, կարող են տրվել շրջանառու միջոցների համար: Այսպիսի վարկերի տրամադրումը դիտվում է որպես միջոց, որի շնորհիվ վերջնական վարկառուն կարող է ներդրում անել արտադրողների և այլ օղակների գործունեության մեջ, որը կօգնի ՋՀԾ տեխնոլոգիաների տարածմանը: Այդպիսի վարկերի տրամադրման համար կպահանջվի ՅՄԳ-Յայաստանի հաստատումը, ԳՖԿ-ի, ՋՀԾ խորհրդատուի և վարկատուների մասնակցությամբ, և մարման ժամկետները կարող են ավելի կարճ լինել, բայց այլ ՋՀԾ վարկերի նման 2-7 տարուց ոչ ավել: Որպես օրինակ կարող է լինել Բարձրարժեք գյուղատնտեսություն բաղադրիչի կողմից աջակցվող սածիլների արտադրման կենտրոնը, որը վարկ է վերցնում սերմեր գնելու համար, որից կաճեցնի սածիլներ վերատնկման նպատակով և սածիլներ արտադրող կենտրոնը իր հերթին սածիլները կվաճառի

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

արտադրողներին, մասամբ վարկով:

**Գ. Համապատասխան վերջնական վարկառուներ**

Վերջնական վարկառուները պետք է լինեն ֆերմերներ կամ գյուղատնտեսական ուղղվածության բիզնեսներ /ներառյալ այն բիզնեսները, որոնք ծառայություններ կամ ապրանքներ են տրամադրում ֆերմերներին կամ ագրոձեռնարկություններին/, որոնք կօգտվեն ոռոգման վերականգնման ներդրումներից: Համապատասխան վարկառուները ներառում են հետևյալ խմբերի այն անձանց ովքեր չունեն մատակարարված ոռոգման ջրի եւ հողի հարկի գծով վճարումների ընթացիկ պարտքեր

- ֆերմերներ, ովքեր (ա) անցել են Ջրից դեպի Շուկա ծրագրի շրջանակներում կազմակերպված վերապատրաստման դասարանային դասընթացի 75%-ը և (բ) մասնակցել են գոնե մեկ պրակտիկ ջրի ներտնտեսային կառավարման ցուցադրության Ջրից դեպի Շուկա ծրագրի միջոցով /յուրաքանչյուրը կհամարվի «Ուսուցանված ֆերմեր»/: Եթե վարկի գումարի որևէ մասը օգտագործվելու է թունաքիմիկատ ձեռք բերելու, տեղափոխելու, պահելու կամ օգտագործելու նպատակով, վարկառուները պետք է մասնակցեն թունաքիմիկատների անվտանգ օգտագործման վերաբերյալ դասընթացին:
- անհատական ընտանեկան տնտեսություններ և անհատ ձեռներեցներ, ովքեր ներգրավված են գյուղատնտեսական ծառայությունների մատուցման, մատակարարման կամ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման գործընթացներում,
- ձեռնարկություններ /սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, համատեղ ձեռնարկություններ, ֆերմերային ասոցիացիաներ, կոոպերատիվներ/, որոնք ներգրավված են գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, գյուղատնտեսական ծառայությունների մատուցման, մարկետինգի, մատակարարման, ոռոգման սարքավորումների ապահովման՝ որպես դիլլեր կամ մեծածախ վաճառող, գործընթացներում:

Ենթադրվում է, որ վերջնական վարկառուները պետք է լինեն ֆինանսապես կայուն և կարողանան ապացուցել վարկը մարելու իրենց կարողությունը, սակայն վերջնական վարկառուի ֆինանսական կայունության և վճարունակության վերաբերյալ որոշումները կայացվելու են վարկատուի կողմից, և չեն կարող պայման լինել վարկային ծրագրով ֆինանսավորվող վարկի հաստատման համար:

**Դ. Վերջնական վարկառուների վարկավորում - անհրաժեշտ պայմաններ և ժամկետներ**

**Համապատասխանության չափանիշները.** Վերջնական վարկառուները պետք է համապատասխանեն վարկային ծրագրի չափանիշներին:

**Վարկի փոխարժեքը.** ՀՄՀ-Հայաստանի կողմից վարկատուներին փոխանցվող վարկերի գումարը և վերջնական վարկառուներին տրվող համապատասխան վարկերը լինելու են ՀՀ դրամով:

**Վարկի գումարի չափը.** Վերջնական վարկառուներին տրամադրվող վարկերը պետք է լինեն 300 000 ՀՀ դրամից ոչ պակաս և 10.5 մլն.ՀՀ դրամից ոչ ավել: 10.5 մլն. ՀՀ դրամը գերազանցող վարկերը կարող են բացառության կարգով տրամադրվել ագրոբիզնեսի գործունեության համար՝ ՀՄՀ-Հայաստանի նախնական գրավոր համաձայնությամբ: Բացառությունը պետք է վարկատուի կողմից հիմնավորվի և ներկայացվի ԳՖԿ մինչև վարկի տրամադրումը: ԳՖԿ-ն կստուգի հիմնավորումը և ՀՄՀ-Հայաստանին կառաջարկի այդ վարկի հաստատումը կամ մերժումը: ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ-ն կհաստատի կամ կմերժի վարկի համար արված բացառությունը՝ մինչև 17 միլիոն ՀՀ դրամի չափով

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

վարկերի համար: Դրանից մեծ գումարները պահանջում են Կառավարող խորհրդի համաձայնությունը և ՀՄԿ-ի առարկությունների բացակայությունը:

**Վարկերի նպատակը/օգտագործումը.** Վարկերը տրամադրվելու են գյուղատնտեսության կամ գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող առևտրային նպատակներով: Գումարները պետք է օգտագործվեն միջին կամ երկարաժամկետ կապիտալ ներդրումների համար /բացառությամբ սահմանափակ չափով շրջանառու միջոցներից, ինչպես որ նշված է մաս IV-ի Բ կետում/ կապված ՀՄԿ-Հայաստանի ՋԻՇ ծրագրի գործողությունների հետ:

**Վարկի ժամկետը/մարումը.** Վարկի ժամկետները պետք է համընկնեն ֆինանսական կանխատեսումների հիման վրա հաշվարկված անհրաժեշտ մարման ժամկետի և/կամ գրավի պիտանի տևողության հետ: Վարկի նվազագույն ժամկետը երկու տարի է /բացառությամբ «դիլլերների ֆինանսավորման» և «արժեշղթայի» արտադրանքների, նշված մաս IV-ի Բ-ում/, իսկ առավելագույնը՝ յոթ տարի է:

**Տոկոսադրույքը.** Վերջնական վարկառուներին տրվող վարկերի տոկոսադրույքը չի կարող գերազանցել տվյալ վարկատուի և ՀՄԿ-Հայաստանի միջև կնքված վարկային պայմանագրում նշված տոկոսադրույքը:

**Մայր գումարների մարման հետևանքով կուտակված շրջանառու ֆոնդից տրամադրված վարկերի տոկոսադրույքը.** Շրջանառու ֆոնդից տրամադրված վարկերի տոկոսադրույքը պետք է լինի այն առավելագույն դրույքը, որը նշված է վարկատուի ստորագրած ՀՄԿ-Հայաստանի ամենավերջին վարկային պայմանագրի մեջ: Եթե ամենավերջին ստորագրված պայմանագիրը լինի 2008թ.-ի ապրիլի 9-ին ստորագրված, ապա կիրառելի առավելագույն տոկոսադրույքը կհամարվի պայմանագրի մեջ նշված հիմնական տոկոսադրույքին /4%/ գումարած այն սփռվածքը, որը նշված է այդ պայմանագրին կից ներկայացված տեղաբաշխման ծանուցման մեջ: Այն վարկատուների համար, որոնք ապրիլի 9-ից սկսած ունեին մի քանի տարբեր սփռվածք, կիրառելի սփռվածքը կհամարվի դրանց առավելագույնը:

**Վարկերի հետ կապված վճարներ և այլ գանձումներ.** Վարկերի հետ կապված յուրաքանչյուր վարկատուի կողմից կիրառվող վճարները և այլ գանձումները չպետք է գերազանցեն տվյալ վարկատուի ՀՄԿ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագրի մեջ նշված չափը:

**Համապատասխանություն բնապահպանական կանոններին.** Բոլոր վարկերը պետք է ենթարկվեն բնապահպանական ստուգման, որը նկարագրված է մաս VI-ում՝ «Բնապահպանական ստանդարտներ»: Ցանկացած վարկային գործունեություն պետք է համապատասխանի ՀՄԿ բնապահպանական ուղեցույցին, ներառյալ այնպիսիները, որոնք կապ ունեն թունաքիմիկատների, հետ և ՀՀ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման պահանջներին /տես, շրջակա միջավայրի մասին օրենքի գլուխ 2-ը/: ՀՀ կառավարության #193 որոշմամբ սահմանված սահմանային մակարդակները գերազանցող ցանկացած գործունեություն պետք է ենթարկվի շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության փորձաքննության, ինչպես նշված է շրջակա միջավայրի մասին օրենքում, այլապես դրանք չեն ֆինանսավորվի:

**Վերջնական վարկառուի մոնիտորինգ.** Վերջնական վարկառուները պետք է համաձայնվեն ՀՄԿ-Հայաստանի կողմից սահմանված մոնիտորինգի և հաշվետվությունների պահանջների հետ, ներառյալ ցանկացած աուդիտի հետ համագործակցությունը: Վերջնական վարկառուները պետք է համաձայն լինեն երաշխավորել բիզնեսի վերաբերյալ գրանցումների մատչելիությունը ՀՄԿ-Հայաստանի կամ նրա կողմից նշանակված հաստատության՝ ԳՖԿ-ի համար, վերջնական վարկառուի՝ ծրագրի չափանիշների հետ համապատասխանության մեջ համոզվելու նպատակով: Կապահովվի ցանկացած մոնիտորինգի կամ գնահատման ընթացքում ստացված բոլոր տվյալների

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

գաղտնիությունը ՀԱՀ-Հայաստանի, ԳՖԿ-ի և վարկատուի միջև:

**Վերակազմում կամ փոփոխություններ.** Վերջնական վարկառուի վարկի որևէ պայման կամ դրույթ չի կարող ենթարկվել որևէ փոփոխության առանց նախապես ՀԱՀ-Հայաստանի գրավոր համաձայնության:

**Գրավ.** Իրենց վարկային որոշումների ընթացքում վարկատուները պետք է ղեկավարվեն խելամիտ դատողությամբ, չպետք է պահանջեն չափազանց մեծ գրավ, իսկ վարկային որոշումները չպետք է ընդունվեն բացառապես գրավի առկայության հիման վրա: Վարկատուներին խրախուսվում է ավելի շատ օգտագործել վարկառուի գյուղում գտնվող միջոցները, քան Երևանում եղած անշարժ գույքը:

**Պարտականությունների չկատարման դեպքեր.** Մայր գումարի և տոկոսի ժամանակին չվճարման, հաշվետվության պահանջները չկատարելու, վարկային պայմանագրի կետերի խախտումների և այլ նմանատիպ պարտազանցումների դեպքում վերջնական վարկառուների նկատմամբ կիրառելի կլինեն դեֆոլտի ստանդարտ դեպքերը:

**Ներկայացումներ և երաշխիքներ.** Վերջնական վարկառուին տրվող յուրաքանչյուր վարկի կամ վարկատուի կողմից տվյալ վարկի դիմաց ցանկացած հաջորդող փոխանցման դեպքում վերջնական վարկառու պետք է ստորագրի սովորական ներկայացուցչական կամ երաշխիքային փաստաթղթերը, որոնք համապատասխանում են ֆինանսավորման տվյալ տեսակին:

**Հանրագումարներ.** Մեկ վարկառուին կամ վարկառուների հանրագումարին /խմբին/ տրվող վարկերը չպետք է գերազանցեն ՀԱՀ-Հայաստանի կողմից սահմանված վարկավորման առավելագույն սահմանը: Երկու կամ ավելի վարկառուներին հատկացվող վարկերը պետք է մտնեն հանրագումարի մեջ, այն դեպքերում երբ համաձայն Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքի վարկառուները համարվում են փոխկապակցված:

**Լիզինգային փոխառություններ.** Բոլոր պայմանները, որոնք վերաբերվում են վարկերին, պետք է վերահաշվարկվեն լիզինգային փոխառությանը համարժեք: Վարկատուի` ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագրով թույլատրելի առավելագույն տոկոսադրույքը համարվում է նաև որպես փոխառության թույլատրելի առավելագույն ենթադրյալ տոկոսադրույք: Բոլոր լիզինգային փոխառությունները պետք է ունենան գնումների ֆիքսված իրավունք/տարբերակ, որի մնացորդը չպետք է գերազանցի սարքավորման կապիտալիզացված արժեքի 5%-ը:

Հաշվարկված ենթադրվող տոկոսադրույքը, որը լիզինգային փոխառության ամբողջական դրույքն է կազմում /որը ներառում է մարման հոսքը, ցանկացած դեպոզիտներ, կանխավճարներ կամ մնացորդներ/ պետք է հավասար լինի հիմնական տոկոսադրույքին գումարած համաձայնեցված սֆռվածքը: Ենթադրյալ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական հաշվիչով i-ն /տոկոսը/ որոշելով: /n=վճարումների թիվը, PV=սարքավորման կապիտալիզացված արժեքը համած ցանկացած արված կանխավճար, PMT=լիզինգային փոխառության ամսական վճարումը, FV=մնացորդային արժեքը, որոշում են i-ն/:

**Արգելված վարկեր/լիզինգային փոխառություններ**

- Վարկեր, որոնք չեն համապատասխանում ՋԴՇ ծրագրի վերջնական վարկառուի համապատասխանության չափանիշներին
- Ապօրինի նպատակներով վերցված վարկեր
- Վարկեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ բնապահպանական ստանդարտներին և ՀՄԿ բնապահպանական ուղեցույցին, ներառելով

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

- պեստիցիդները
- Վարկեր՝ բնակելի տարածք գնելու, կառուցելու կամ այն նորոգելու նպատակներով
- Վարկեր՝ առկա պարտքի մարման նպատակով
- Սպառողական նպատակներով վերցված վարկեր
- Վարկեր ՉՄՅ-Հայաստանի աշխատակիցներին կամ աուդիտորներին, վարկատուներին, նրանց աշխատակիցներին, անկախ աուդիտորներին, մասնագետներին կամ տնօրեններին, ՋՂՇ ծրագրի աշխատողներին:
- Հետևյալ գործընթացների համար՝ մեղվապահություն, ձկնաբուծություն, սնկարտադրություն, ցանկացած մանր և խոշոր եղջերավորներ, խոզաբուծություն կամ թռչնաբուծություն, ինչպես նաև սրանց հետ կապված ցանկացած գործունեություն, օրինակ շինություններ կամ արտադրանքի վերամշակում:
- Հող գնելու նպատակով: Սա վերաբերվում է հողի բոլոր կատեգորիաներին, անկախ այն բանից, թե դա պտղատու այգի է, խաղողի այգի, հող, որը օգտագործվում է բանջարեղենի աճեցման համար կամ հող, որը պետք է դառնա պտղատու կամ խաղողի այգի:
- Խորքային հորերի համար,
- Մարդատար մեքենաների համար, նույնիսկ եթե դրանք օգտագործվելու են ֆինանսավորվող գործունեության համար:
- Ցանկացած տրակտորի գնման համար, որը 3 տարուց հին է:
- ՉՄՅ-Հայաստանի կողմից սահմանված այլ անթույլատրելի նպատակներ կամ ՉՄԿ-ի պայմանագրի 2.3 բաժնում /Սահմանափակումներ ՉՄԿ ֆինանսավորման օգտագործման կամ տնօրինման վերաբերյալ/ նշված ՉՄԿ-ի ֆինանսավորման համար անթույլատրելի գործունեության տեսակներ:  
[/http://www.mcc.gov/countries/armenia/032706ArmeniaCompact.pdf/](http://www.mcc.gov/countries/armenia/032706ArmeniaCompact.pdf/)

**Վարկերի համապատասխանության չափանշանների բացառությունները.** Բացառությունները կարող են վերաբերվել այն վարկերին, որոնք 10.5 միլիոն ՀՀ դրամից մեծ են և որոնք որոշակի ազդեցություն ունեն համայնքի տնտեսական աճի, նոր աշխատատեղերի ստեղծման հարցում, կամ բացառիկ դեպքեր են խաղում ՋՂՇ ծրագրում: Նման վարկերը պետք է տրամադրվեն միայն այն բիզնեսներին, որոնք ներգրավված են մթերքի վերամշակման, համախմբման /մթերման/ կենտրոնների և այլ ենթակառուցվածքների գործընթացներում՝ դրանց հետագա զարգացման հարցերում:

**Ե. Վարկեր կանանց**

Հայաստանի Հանրապետությունում կանայք հաճախ դժվարություններ են ունենում վարկ ստանալու հարցում: Ֆերմերային տնտեսությունների մոտ 34 տոկոսը գլխավորում են կանայք, սակայն այլ ծրագրերով տրամադրված վարկերի միայն մոտ 8% է տրվել կանանց: Վարկատուները տվյալ հարցում խրախուսվում են ապահովել վարկային քաղաքականության հավասար հնարավորություններ և ցուցաբերել զենդերային չեզոք քաղաքականություն: Վարկատուները մեծապես խրախուսվում են կին դիմորդներին հատուկ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու հարցում: Ցանկալի է նաև, որ վարկատուները խրախուսեն, վերապատրաստեն և առաջարկեն կին աշխատակիցներին վարկային պատասխանատու պաշտոնի անցնելու հարցում:

**V. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Վարկատուները պատասխանատու են վարկառուների վարկերի պատշաճ մոնիտորինգի և կառավարման համար՝ անկախ ՉՄՅ-Հայաստանի կամ վերջինիս հանձնարարությամբ նշանակված մեկ այլ իրավասու մարմնի կողմից կատարվող բոլոր տեսակի վերահսկման

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

և կառավարման գործողություններից: ՀԱՀ-Հայաստանը կարող է ստուգել, վերահսկել կամ աուդիտի ենթարկել վարկային ցանկացած փոխանցում, վարկային փաթեթ կամ փաստաթուղթ, վարկերի երաշխավորման քաղաքականություններն ու ընթացակարգերը, կամ ՋՀԸ վարկային ծրագրի շրջանակներում վարկատուների կողմից իրականացվող վարկային գործընթացի ցանկացած կողմը: Վարկատուները պետք է ենթարկվեն ՀԱՀ-Հայաստանի կողմից ներկայացվող աուդիտի պահանջներին, որոնք նշված են ՀԱԿ պայմանագրի 3.8 բաժնում՝ Գրանցումներ և տեղեկատվություն՝ Մատչելիություն, աուդիտ և վերստուգումներ:

[/http://www.mcc.gov/countries/armenia/032706ArmeniaCompact.pdf/](http://www.mcc.gov/countries/armenia/032706ArmeniaCompact.pdf/):

Վարկատուները պետք է ենթարկվեն ՀԱՀ-Հայաստանի կողմից սահմանված մոնիտորինգի և հաշվետվությունների չափանիշներին: ՀԱՀ-Հայաստանը կամ վերջինիս կողմից նշանակված անձը կապահովի մոնիտորինգի և հաշվետվությունների ներկայացման միասնական ֆորմատն ու պահանջները:

Հաշվետվության գործընթացը կարող է ներառել բայց չսահմանափակվել հետևյալը/ով՝

- Վարկատուների հաշիվների ամսական շարժի վերաբերյալ հաշվետվություններ,
- Ամսական վիճակագրական տվյալներ՝ ՀԱՀ-Հայաստանի կողմից տրամադրված միօրինակ ֆորմատով: Ընդհանուր առմամբ վիճակագրական տվյալները ՋՀԸ վարկային ծրագրի վարկերի համար պետք է ներառեն հետևյալ տեղեկությունները՝
  - Վճարված վարկերի թիվն ու գումարը, ըստ վարկառուների սեռի և տարիքի,
  - Յուրաքանչյուր վերջնական վարկառուին գումարի վճարման ստույգ օրը,
  - Վարկերի մարումների գումարը,
  - Գործող վարկերի թիվը, գումարը և տոկոսային արտահայտությունը,
  - ՋՀԸ վարկային ծրագրի ընդհանուր պորտֆելի ժամկետանց վարկերի թիվը, գումարը և տոկոսային արտահայտությունը /60, 90, 180, կամ ավելի օր ուշացած/,
  - Միջին մարման ժամկետը /հաշվարկված ԳՖԿ-ի կողմից/,
  - Միջին տոկոսադրույքը /հաշվարկված ԳՖԿ-ի կողմից/
- Եռամսյակային առաջընթացի հաշվետվություններ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող վարկավորման գործընթացների վերաբերյալ, ներառյալ բնապահպանական պահանջների հետ համապատասխանությունը:

## **VI. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՍԱՆԴԱՐՏՆԵՐ**

### **Ա. Պահանջներ**

Վարկատուները պարտավոր են երաշխավորել, որ վարկառուների իրականացրած գործունեությունները չեն հանգեցնի բնապահպանական, առողջության կամ անվտանգության հետ կապված վտանգների և խնդիրների: Վարկատուն պետք է երաշխավորի նաև, որ գործունեությունները համապատասխանում են ՀՄԿ բնապահպանական ուղեցույցին և ՀՀ շրջակա միջավայրի մասին օրենքներին: Բոլոր համապատասխան փաստաթղթերը և թույլտվությունները պետք է պահվեն յուրաքանչյուր վերջնական վարկառուի փաստաթղթերում՝ հարկ եղած դեպքում տրամադրելու համար:

### **Բ. Բնապահպանական ստուգում**

Յուրաքանչյուր վարկ պետք է հետևյալ ձևով անցնի բնապահպանական ստուգման գործընթացը՝

(1) Վարկատուները պետք է վարկային դիմումների մեջ ներառեն բնապահպանական հարցաթերթ /«Վարկային համաձայնագրի ձև»-ին կցված Հավելում 1, որը այստեղ ներկայացված է որպես Հավելված III/, որը պետք է լրացվի վերջնական վարկառուի կողմից: Վերջնական վարկառուն պատասխանատու է բոլոր համապատասխան թույլտվությունները և հաստատումները ձեռք բերելու համար, որոնք կարող են պահանջվել որոշակի տիպի գործունեության ֆինանսավորման համար, և որոնք կտրվեն համապատասխան տեղական և/կամ ազգային իրավասու մարմինների կողմից:

(2) Վարկատուները որպես վերջնական վարկառուի վարկի ֆինանսական վերլուծության մաս, կուսումնասիրեն վերջնական վարկառուի հարցաթերթը և կլրացնեն բնապահպանական ստուգաթերթը /«Վարկային համաձայնագրի ձև»-ին կցված Հավելում 2, Հավելված III/: Վարկատուները հարկ եղած դեպքում կկատարեն տեղում այցելություն և ստուգում: Վարկատուն կօգտագործի բնապահպանական հարցաթերթը որոշելու համար թե արդյոք վերջնական վարկառուի վարկային գործունեությունը ներառված է այն գործունեության տեսակներում, որոնք նկարագրված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» ՀՀ օրենքի /1995թ. նոյեմբերի 20/ 2-րդ բաժնում՝ «Նախատեսվող գործողությունների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» մեջ: Եթե գործունեությունը գերազանցում է ՀՀ Կառավարության 1999թ.-ի մարտի 30-ի #193 որոշմամբ ընդունած սահմանաչափը /ՀՀ Կառավարության որոշումը նախատեսվող գործունեությունների սահմանային մակարդակների վերաբերյալ/, պետք է մշակվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում /ՇՄԱԳ/: Այս ՇՄԱԳ-ը կենթարկվի պետական բնապահպանական փորձաքննության: Վարկատուն պետք է նաև երաշխավորի, որ վերջնական վարկառուն չի օգտագործի վարկը ՀՄԿ բնապահպանական ուղեցույցով անթույլատրելի պեստիցիդների ձեռք բերման ու օգտագործման նպատակով:

(3) Այն գործունեությունը, որը կպահանջի ՇՄԱԳ չի կարող ֆինանսավորման ենթակա լինել մինչև որ պետական բնապահպանական փորձաքննությունից դրական եզրակացություն չստացվի: Այս վարկերի համար պահանջվում է ՀՄԿ-Հայաստանի կամ նրա կողմից նշանակված անձի գրավոր համաձայնությունը՝ մինչև վարկը համապատասխան կհամարվի ՋԴՇ վարկային ծրագրի շրջանակներում:

(4) Վարկատուն ԳՖԿ-ին կներկայացնի վարկառուի վարկային դիմումի, բնապահպանական հարցաթերթի, վարկատուի կողմից լրացրած ստուգաթերթի և այլ պահանջված թույլատրությունների և մաքսազերծման հավաստագրերի պատճենները: Եթե ծրագրի համար պահանջվում է ՇՄԱԳ, այն նույնպես պետք է ներկայացվի:

(5) Պահանջվող բնապահպանական մեղմացուցիչ միջոցառումների հետ

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

համապատասխանության կարգավիճակը ներկայացվում է վարկատու մասնագետների կողմից իրենց ծրագրի իրականացմանը վերաբերվող պարբերական /եռամսյակային/ հաշվետվությունների մեջ: Անհամաձայնության դեպքում վարկային մասնագետը /ԳՖԿ-ի և ՅՄՅ-Հայաստանի աջակցությամբ/ կուսումնասիրի անհամապատասխանության բնույթը և պատճառները/ը և որոշում կկայացվի հետագա գործողությունների վերաբերյալ /փոփոխումներ կամ դադարեցումներ/: ԳՖԿ-ն իր հերթին, կտրամադրի այս տեղեկատվությունը ՅՄՅ-Հայաստանին:

**VII. ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒՄ**

Պայմանագրի ժամկետի ավարտից հետո ՋՊՇ վարկային ծրագիրը կգործի ևս չորս տարի, ՋՊՇ վարկային հնարավորության շրջանակներում վարկատուներին տրամադրվող գումարներին տրամադրելով թույլատրելի ժամկետ մինչև 2015թ.-ի սեպտեմբեր ամիսը, և դրանից ոչ ուշ, համաձայն ՅՄՅ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագրի: ՅՄՅ-Հայաստանի կողմից ընդունելի վստահված կամ լուծարման գործակալի ընտրությունից կախված, ըստ որի կենթադրվի վարկային ծրագրի կառավարումը և վերահսկողությունը պայմանագրի ավարտից հետո, վարկատուները կարող են շարունակել շրջանառել վերջնական վարկառուների մարումները՝ տրամադրելով նոր վարկեր մինչև 2015թ.-ի սեպտեմբերի 15-ը, կամ դրանից ավելի շուտ այն դեպքում, եթե ՅՄՅ-Հայաստանը տեղեկացնի վարկատուին, որ համաձայն ՅՄՅ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագրի կամ սույն Ծրագրի վարչական քաղաքականության և ընթացակարգերի, վարկատուից պահանջվում է ամբողջ գումարի հետ վերադարձ:

Պայմանագրի ավարտից առնվազն 6 ամիս առաջ ՅՄՅ-Հայաստանը պետք է ունենա վստահված կամ լուծարման գործակալ, ով կտնօրինի մնացած բոլոր ակտիվները պայմանագրի վերջի ժամանակաշրջանում: Այդ գործակալի հետ պայմանագիրը պետք է հասցեագրի այն, թե ինչպես են օգտագործվելու միջոցները և ինչ ժամկետով, ինչպես են վերջում տնօրինվելու գումարները և ինչպիսի հաշվետվություններ են ներկայացվելու ՅՄԿ-ին այդ ժամանակամիջոցում: Վստահված գործակալի ընտրությունը և ակտիվների տնօրինման վերջնական ծրագիրը ենթակա կլինեն ՅՄԿ-ի կողմից առարկությունների բացակայությանը:

Եթե մինչև վերջնաժամկետը, այն է երեք ամիս պայմանագրի դադարեցման օրվանից առաջ, ոչ մի վստահված գործակալ չի ընտրվել, բոլոր նոր ՅՄԿ վարկերի հետ կապված գործունեությունները հնարավորինս չափ արագ կդադարեցվեն: Տվյալ դեպքում ՅՄԿ-ն իր սեփական ընտրման գործընթացի միջոցով կընտրի լուծարման գործակալ, որը կվերանայի ակտիվների տնօրինումը և լուծարումը:

**VIII. ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՀՄՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ**

**Ա. Ընդհանուր տեղեկություն**

Աուդիտ պլանը սկսվում է ՅՄՅ-Հայաստանի 2008 թ.-ի ֆինանսական տարվանից և ավարտվում է Հայաստանի Հանրապետության և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի միջև կնքված համաձայնագրի ավարտման օրը: ՅՄՅ-Հայաստանի ֆինանսական տարին ավարտվում է ամեն տարվա դեկտեմբերի 31-ին: Վարկային ծրագրի գումարների հետագա տնօրինման նախագիծը, որը պետք է պատրաստ լինի ոչ ուշ, քան պայմանագրի ավարտից վեց ամիս առաջ, պետք է ներառի շարունակական աուդիտորական պահանջներ մինչև 2015 թ.-ի սեպտեմբերի 15-ը:

**Ջրից Դեպի Շուկա Ծրագրի Վարկային Բաղադրիչ  
Ծրագրի Վարչական Քաղաքականությունը և Ընթացակարգերը**

---

**Բ. Աուդիտի ենթակա փաստաթղթերը**

1. ՀՄՀ-Հայաստանի վարկային ծրագրին վերաբերող ԳՖԿ-ի վարկային հաշվապահական հաշվառման գրանցումները:
2. Յուրաքանչյուր մասնակից վարկատուի վարկերի հաշվապահական հաշվառման գրանցումները, որոնք ֆինանսական տարվա վերջի դրությամբ ունեն վարկատուի ընթացիկ վարկ:

**Գ. Աուդիտի պատասխանատուները**

ՀՄՀ-Հայաստանը պատասխանատու է աուդիտի ծառայությունների գնման համար և ընտրված անկախ աուդիտորական ընկերության հետ կկազմի ծառայություն մատուցելու պայմանագրի Կողմ: ԳՖԿ-ն աուդիտորական ընկերության համար կլինի որպես օգնող և տեղեկատվական աղբյուր:

Աուդիտը կանցկացվի տարեկան կտրվածքով, դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացի առաջին տարվանից, որի դեպքում աուդիտը կարվի 2008թ.-ի հունվարի 1-ից 2009թ.-ի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածը, և վերջին տարվանից, որի դեպքում այն կիրականացվի պայմանագրի ավարտի օրվա դրությամբ: Աուդիտի արդյունքները ՀՄՀ-Հայաստանին կան նրա իրավահաջորդին և ՀՄԿ-ին պետք է ներկայացվի ոչ ուշ քան յուրաքանչյուր տարվա ավարտից 90 օր հետո /կամ վերը նշվածի համաձայն՝ պայմանագրի ավարտից հետո/:

**Դ. Աուդիտի ժամկետները**

Յուրաքանչյուր աուդիտ պետք է իրականացվի տարեկան կտրվածքով, դեկտեմբերի 31-ի դրությամբ, բացառությամբ վերջին տարվան, երբ աուդիտը պետք է իրականացվի համաձայնագրի ավարտման օրվա դրությամբ: Աուդիտի արդյունքները պետք է ներկայացվեն ՀՄՀ-Հայաստան կամ նրա կողմից նշանակված իրավահաջորդին և ՀՄԿ-ին ոչ ուշ, քան 90 օր յուրաքանչյուր տարեվերջից հետո:

**Ե. Հատուկ պահանջներ**

1. Ցանկացած վարկ, որը տրվել է բացառության կարգով /տես ԾՎԶԸ, մաս II, Զ/, պետք է առանձին ուսումնասիրվի՝ որպես աուդիտի մաս: ԳՖԿ-ն ՀՄՀ-Հայաստանին ուղղված իր ծանուցման մեջ պետք է ներառի այն բոլոր վարկերի ցուցակը, որոնք տրվել են բացառության կարգով:
2. ՀՄՀ-Հայաստանի կողմից գնված աուդիտից բացի, յուրաքանչյուր վարկատու, համաձայն պայմանագրի, պարտավոր է հնարավորության դեպքում ԳՖԿ-ին տրամադրել իրենց կողմից աուդիտ արված ֆինանսական հաշվետվությունների և հաշիվների վավեր պատճենները ոչ ուշ, քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից վեց ամիս հետո: ԳՖԿ-ն կստուգի դրանք և կներկայացնի ՀՄՀ-Հայաստանին վարկային ծրագրին վերաբերվող ցանկացած դիտարկման և առաջարկությունների հետ միասին:
3. ԳՖԿ-ն կվերանայի աուդիտի արդյունքները և իր առաջարկությունները կներկայացնի ՀՄՀ-Հայաստանին՝ ցանկացած նկատված թերություն ուղղելու համար: ՀՄՀ-Հայաստանը պարտավորված չէ ընդունելու այդ առաջարկությունները, և կարող է հարկ եղած դեպքում գործարկել ուղղման հետագա գործողություններ:

## ՀԱՎԵԼՎԱԾ I – ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հիմք շահադրույք	Այն տոկոսադրույքը /4%/, որը ՀՄՀ-Հայաստանը գանձում է վարկատուներից՝ նրանց տրամադրվող վարկային միջոցների համար
ԿԲ	ՀՀ Կենտրոնական բանկ
ԳԳՏ	ՀՄՀ-Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն
Համաձայնագիր	Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և Հայաստանի կառավարության միջև ստորագրված համաձայնագիր
Վարկային հնարավորություն	Ֆինանսական հաստատություններին տրամադրվելիք 8.5 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորման հնարավորություն՝ ՋՂԾ-ի շահառուների վարկավորման համար
Վարկային ծրագիր	ՋՂԾ ծրագրի մի հատվածը, որի նպատակն է մեծացնել գյուղերի և գյուղատնտեսության վարկավորումը, որի մի մասն էլ կազմում է վարկային հնարավորությունը
Վարկատուի հաշվեհամար	Հաշվեհամար, որը կբացվի յուրաքանչյուր վարկատուի կողմից այն առևտրային բանկում, որը ընդունելի կլինի ՀՄՀ-Հայաստանի համար: /Մասնակից բանկերը կարող են բացել այս հաշվեհամարը իրենց իսկ բանկերում/: Այս տերմինը ներառում է ոչ միայն փաստացի բանկային հաշիվը, այլ նաև բոլոր հաշվապահական գրանցումները և ենթահաշիվները, որոնք կապված են ՋՂԾ վարկային ծրագրի հետ:
Վարկատու	ՀՄՀ-Հայաստանի կողմից հավատարմագրված ֆինանսական հաստատություն, որը ՀՄՀ-Հայաստանի հետ կնքել է վարկային հնարավորության վարկային պայմանագիր
Վերջնական վարկառու	Համապատասխանող անհատ կամ ձեռնարկատիրական գործունեություն, որը դիմում է վարկի համար կամ վարկ է ստանում ՋՂԾ վարկային հնարավորության շրջանակներում
Ֆինանսավորման փոխանցման հայտ	Վարկատուների կողմից կազմված ձև, որը ներկայացվում է ԳՖԿ ֆինասավորման կամ վերաֆինանսավորման խնդրանքով՝ վարկային ծրագրի շրջանակներում վերջնական վարկառուներին տրամադրվող վարկերի համար, ըստ ՀՄՀ-Հայաստանի վարկային հնարավորության վարկային պայմանագրի
ՀՀԿ	Հայաստանի Հանրապետության Կառավարություն
Կառավարման խորհուրդ	ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհուրդը
ԲԳ	Բարձրարժեք գյուղատնտեսություն, ՋՂԾ ծրագրի բաղադրիչ
Իրականացնող կառույց	ԳՖԿ-ն, որը ՀՄՀ-Հայաստանի անունից իրականացնում և վերահսկում է վարկային ծրագրի ամենօրյա գործողությունները

Վարկային պայմանագիր	ՀՄՀ-Հայաստանի և վարկատուի միջև կնքված վարկային պայմանագիրը
Վարկային փափեթ	Փաստաթղթերի այն փաթեթը, որը վարկատուից պահանջվում է ներկայացնել ԳՖԿ՝ ֆինանսավորում ստանալու համար
ՀՄՀ-Հայաստան	Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստան, պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը ստեղծվել է ՀՄԿ-ի գրանտը տնօրինելու համար
ՀՄԿ	Հազարամյակի մարտահրավեր կորպորացիա, Միացյալ Նահանգների Կառավարության կորպորացիա՝ ստեղծված աշխատելու աշխարհի որոշ ամենաաղքատ երկրների հետ:
ՀՄԿ բնապահպանական ուղեցույց	ՀՄԿ բնապահպանական ուղեցույցը, որը կարող եք գտնել հետևյալ ինտերնետային կայքում՝ <a href="http://www.mcc.gov/countrytools/compact/fy07guidance/english/20-enviroandsocialassessment.pdf">http://www.mcc.gov/countrytools/compact/fy07guidance/english/20-enviroandsocialassessment.pdf</a>
Միջին երկարաժամկետ ֆինանսավորում	և 2-7 տարի ժամկետայնությամբ վարկեր
ՋՆԿ	Ջրի ներտնտեսային կառավարում, ՋՂՇ ծրագրի բաղադրիչ
ՀՎՄ	ՋՂՇ ծրագրի հետքերքահավաքային, վերամշակման և մարկետինգի բաղադրիչ
Ծրագիր	Համաձայնագրի շրջանակներում եղած ՀՄՀ-Հայաստանի բոլոր գործունեությունները
ԳՖԿ	Գյուղական ֆինանսավորման կառույց ԾԻԳ ՊՀ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՊՈԱԿ	Պետական ոչ-առևտրային կազմակերպություն
Ուսուցանված ֆերմեր	Ֆերմերներ, ովքեր (ա) մասնակցել են Ջրից դեպի Շուկա ծրագրի շրջանակներում կազմակերպված Բարձրարժեք գյուղատնտեսության կամ Ջրի ներտնտեսային կառավարման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներին և ստացել վկայական և (բ) մասնակցել են գոնե մեկ պրակտիկ ջրի ներտնտեսային կառավարման ցուցադրության Ջրից դեպի Շուկա ծրագրի միջոցով
ՈՒՎԿ	ՈՒՎԿ վերսալ վարկային կազմակերպություն, սահմանված և կարգավորվող ԿԲ-ի կողմից
ՋՂՇ ծրագիր	ՀՄՀ-Հայաստանի Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչ
ՋՂՇ խորհրդատու	ԷյՍԻԴԻԱյ/ՎՕԿԱ Կոնսորցիում
ՋՂՇ վարկային պորտֆել ԶՕԸ	Վարկատուների այն վարկերի պորտֆելը, որոնք տրամադրվում են վարկային ծրագրի շրջանակներում Ջրագտագործողների ընկերություն

## ՀԱՎԵԼՎԱԾ II – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՅՑ

### **Ընդհանուր ծանոթություն**

Ամերիկայի Միացյալ Նահանգները, գործելով Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի /ՅՄԿ/ միջոցով և Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծել են Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը, համաձայն որի ՅՄԿ-ն 235 650 000 ԱՄՆ դոլարի աջակցություն կցուցաբերի Հայաստանին /ՅՄԿ ֆինանսավորում/ Հայաստանում տնտեսական աճի միջոցով աղքատությունը նվազեցնելու համար /համաձայնագիր/: Բացառությամբ այն դեպքերի, երբ ՅՄԿ-ն հատուկ կհամաձայնվի, ՅՄԿ-Հայաստանից բացի ուրիշ ոչ մի այլ կողմ մի չի կարող որևէ իրավունք պահանջել համաձայնագրից կամ որևէ պահանջ ներկայացնել ՅՄԿ ֆինանսավորման գումարների նկատմամբ: Համաձայնագիրը և դրան վերաբերվող լրացուցիչ պայմանագրերը հասանելի են հետևյալ ինտերնետային կայքերում` [www.mca.am](http://www.mca.am), [www.mcc.gov](http://www.mcc.gov):

ՅՄԿ-Հայաստանը հնարավորություն է ընձեռնում բոլոր համապատասխան ֆինանսական հաստատություններին /որոնք համապատասխանում են սույն փաստաթղթի մեջ նշված համապատասխանության չափանիշներին/ մասնակցելու 8 500 000 ԱՄՆ դոլարի վարկավորման ծրագրին /Ձրից դեպի շուկա վարկային ծրագիր/: Այն ֆինանսական հաստատությունները, որոնք հետաքրքրված են և համապատասխանում են վարկային ծրագրի մասնակցության չափանիշներին /վարկատուներ/, հնարավորություն կստանան օգտվելու ՅՄԿ-Հայաստանի կողմից տրամադրվող մինչև յոթ /7/ տարի ժամկետով, տարեկան 4.0% ֆիքսված տոկոսադրույքով գումարների համար` ֆերմերներին և գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունների հետագա վարկավորման նպատակներով` ՅՄԿ-Հայաստանի համաձայնագրի շրջանակներում ստեղծվող բարելավված ոռոգման համակարգի և գյուղական ճանապարհների ռազմավարական ներդրումների հետ համատեղ:

Վարկային ծրագրի գումարները փոխառության տեսքով տրամադրվելու են մասնակից վարկատուներին երեք տարի ընթացքում հետևյալ խմբաքանակներով`

01/2008-ից մինչև 9/2008 – 1,500,000 ԱՄՆ դոլար  
01/2009-ից մինչև 9/2009 – 5,500,000 ԱՄՆ դոլար  
10/2009-ից մինչև 9/2010 – 1,500,000 ԱՄՆ դոլար

### **Մասնակցության ուղեցույց**

ՅՄԿ-Հայաստանը բանկերից և ունիվերսալ վարկային կազմակերպություններից /ՈւՎԿ/ ակնկալում է վարկային ծրագրի հավատարմագրման հայտեր, ովքեր որ ցանկություն ունեն մասնակցելու վարկային ծրագրին որպես վարկատուներ: Ընտրված վարկատուները իրավասու կլինեն մրցակցելու միջին և երկարաժամկետ վարկային միջոցների համար, որը կառաջարկվի ՅՄԿ-Հայաստանի կողմից մինչև 2010թ.-ի սեպտեմբերի 30-ը, և այն վարկատուն որը կներկայացնի ֆինանսավորման պահանջ, նա էլ կստանա գումարը:

### **Իրավասության չափանիշներ**

Բոլոր բանկերը և ՈՒՎԿ-ները, որոնք համապատասխանում են հետևյալ չափանիշներին` իրավասու են մասնակցելու`

- Լիցենզավորված են և համապատասխանում են ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության օրենքներին և կանոնակարգերին:
- Համաձայն են ՅՄԿ-Հայաստանի վարկային հնարավորության վարկային պայմանագրի պայմաններին /ՅՄԿ-Հայաստանի և վարկատուների միջև եղած պայամանագիր/:

- Ձեռնամուխ լինի սպասարկելու Հայաստանի գյուղատնտեսական ոլորտին և գլխավորապես Ջրից դեպի Շուկա ծրագրի դասընթացն ավարտած շահառուներին՝ ՋԺՇ վարկային ծրագրի շրջանակներում իրենց իրականացրած գործունեությունը իրենց կողմից սպասարկվող մարզերում կանոնավոր կերպով ամսական առնվազն երեք անգամ ներկայացնելով Ջրից դեպի Շուկա ԲԳ և ՋՆԿ դասընթացների ժամանակ:

## **Հավատարմագրման և տեղաբաշխման գործընթացը**

ՀԱՀ-Հայաստանը կիրականացնի հավատարմագրման գործընթաց, որին կհետևի վարկատուներին գումարների տեղաբաշխման գործընթացը, որը կիրականացվի «առաջինը պահանջողին» սկզբունքով:

Առաջին փուլում, հավատարմագրման գործընթաց, որը կհետևի հավատարմագրման հայտեր ներկայացնելու գործընթացին, ՀԱՀ-Հայաստանը կորոշի տեղաբաշխման գործընթացին մասնակցելու համապատասխանության չափանիշները: Այն բանկերը և ՈՒՎԿ-ները, որոնք կհամարվեն ծրագրի չափանիշներին համապատասխանող, ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագիրը ստորագրելուն պես կկոչվեն վարկատուներ:

ՀԱՀ-Հայաստանը ունի բոլոր կամ ցանկացած հավատարմագրման հայտ/եր/ի մերժման իրավունք, հիմք ընդունելով ֆինանսական հաստատության աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և կից ծանոթագրությունների ոչ դրական տեղեկատվությունները:

Վարկատուները մինչև տեղաբաշխման գործընթացին մասնակցելը պետք է ՀԱՀ-Հայաստանի հետ ստորագրեն ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագիրը:

Երկրորդ փուլում, տեղաբաշխման գործընթաց, վարկային ծրագրի գումարները կտեղաբաշխվեն վարկատուներին հիմնվելով Ջրից դեպի Շուկա ծրագրի վերջնական վարկառուների պահանջարկի վրա, որը կներկայացվի ԾՎԶԸ-ին և ՀԱՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագրին համապատասխան Ֆինանսավորման փոխանցման հայտերի միջոցով /ԳՖԿ-ի և ՀԱՀ-Հայաստանի որոշմամբ/:

## **Տեղեկատվություն հետաքրքրված բանկերի և ՈՒՎԿ-ների համար**

Վարկային ծրագրի և մասնակցության ուղեցույցի ավելի ամբողջական նկարագրությունը գետեղված է Ծրագրի վարչական քաղաքականությունը և ընթացակարգերը փաստաթղթում և կարելի է ստանալ ՀԱՀ-Հայաստանի ինտերնետային կայքից [/www.mca.am/](http://www.mca.am/) կամ գրասենյակից՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-ից մինչև 17:00-ն՝ ստորև նշված հասցեով:

ՀԱՀ-Հայաստանը 2009թ.-ի փետրվարի \_\_\_\_, ժամը \_\_\_\_\_ /նշված հասցեում/ կանցկացնի կոնֆերանս՝ բոլոր հետաքրքրված բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար: Այս կոնֆերանսի ընթացքում կտրվի ծրագրի, համապատասխանության չափանիշների, ինչպես նաև հավատարմագրման գործընթացի մանրամասն պարզաբանումներ:

## **Պատասխանելու զուգումներ**

Հավատարմագրման բոլոր հայտերը վարկային ծրագրի համար պետք է ստացվեն ստորև նշված հասցեով ոչ ուշ, քան 2009 թ. փետրվարի \_\_\_\_, ժամը 17:00: Նշված ժամկետից ուշ ներկայացված ցանկացած մասնակցության հայտ կմերժվի:

Պարոն Ռուդոլֆ Պետրոսյան  
Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ  
Գնումների պատասխանատու  
2/1 Մելիք Ադամյան փ., Երևան, Հայաստանի Հանրապետություն, 375010  
Հեռախոս՝ (374-10) 54 68 16 (17, 18, 19) ներքին՝ 208  
Ֆաքս՝ (374-10) 54 79 86  
Էլ. փոստ՝ [petrosyanr@mca.am](mailto:petrosyanr@mca.am)

**ՀՄՀ-Հայաստանի Ջրից դեպի Շուկա վարկային ծրագիր  
Համապատասխանության տեղեկագիր և հավատարմագրման հայտ**

Հաստատության անունը \_\_\_\_\_

Հաստատության տեսակը<sup>1</sup>: \_\_\_\_\_

Գրանցված գրասենյակի հասցեն: \_\_\_\_\_

Հաստատությունը լիցենզավորված է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից և համապատասխանում է ՀՀ օրենքներին և Կենտրոնական բանկի կանոնակարգերին /եթ այո, կից ներկայացնել լիցենզիայի պատճեն/:

Այո       Ոչ

Հաստատությունը ձեռնամուխ կլինի՞ սպասարկելու Հայաստանի գյուղատնտեսական ոլորտը և գլխավորապես Ջրից դեպի Շուկա ծրագրի դասընթացն ավարտած շահառուներին, մարզերում ՋԴՇ վարկային ծրագրի շրջանակներում իրենց իրականացրած գործունեությունը կանոնավոր կերպով՝ ամսական առնվազն երեք անգամ ներկայացնելու Ջրից դեպի Շուկա ԲԳ և ՋՆԿ դասընթացների ժամանակ:

Այո       Ոչ

Հաստատությունը **ի գորու չէ** վարկային ծրագրի շրջանակներում սպասարկել հետևյալ մարզերը՝ \_\_\_\_\_

Հաստատությունը համաձայն է ՀՄՀ-Հայաստանի վարկային ծրագրի վարկային պայմանագրի բոլոր պայմաններին և ժամկետներին:

Այո       Ոչ

Կից ներկայացնել ձեր հաստատության աուդիտի ենթարկված վերջին ֆինանսական հաշվետվությունների պատճենները՝ և հայերեն և անգլերեն լեզուներով, ներառյալ աուդիտորի ծանոթագրությունները:

Կից ներկայացնել ընթացիկ տարվա հրապարակման համար նախատեսված առկա միջանկյալ եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, որը ներառում է հետևյալ հաշվետվությունները համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդի 2007թ.-ի հուլիսի 10-ի թիվ 205Ն և 2003թ.-ի օգոստոսի 12-ի թիվ 279Ն որոշման՝

- 1) ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն՝ ձև 6
- 2) միջանկյալ հաշվապահական հաշվեկշիռ՝ ձև 7
- 3) սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն՝ ձև 8
- 4) դրամական հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն՝ ձև 9
- 5) միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման վարման քաղաքականությունը՝ ձև 5 /վերաբերվում է միայն բանկերին/:

Աուդիտ արված ֆինանսական հաշվետվության համաձայն հաստատության ընդհանուր կապիտալը \_\_\_\_\_ ՀՀ դրամ է:

<sup>1</sup> Բանկ կամ ունիվերսալ վարկային կազմակերպություն  
Հավելված II-4

**ՀԱՅ-Հայաստանի գնահատման մատրիցան վարկային ծրագրի  
հավատարմագրում ակնկալող ֆինանսական հաստատությունների համար**

\_\_\_\_\_ /ֆինանսական հաստատության անունը/ համաձայն է որպես վարկատու հավատարմագրվելու դեպքում Ջրից դեպի Շուկա ծրագրի վերջնական վարկառուների վարկավորման համար կիրառել հետևյալ առավելագույն գանձումները:

Անվանում	Գումարը
1.) Առավելագույն տոկոսադրույք /տարեկան մինչև 12%/	%
2.) Վարկի հետ ուղղակի կապ ունեցող առավելագույն վճարներ ** /Որպես վարկի գումարի % վարկի ամբողջ ընթացքում/ կամ  /Հաստատուն գումար ՀՀ դրամով վարկի ամբողջ ընթացքում/	%  կամ  ՀՀ դրամ
3.) Վարկ ստացողներից գանձվող այլ առավելագույն գումարներ կամ ներդրում ***  /Որպես վարկի գումարի % վարկի ամբողջ ընթացքում/	%

\*\* Սա վերաբերվում է վարկատուի կողմից կատարված գանձումներին: Վերջնական վարկառուները պետք է վճարեն երրորդ կողմի վճարները, ինչպիսիք են գնահատման, նոտարական, թղթերի կազմման կամ գրանցման վճարները, ինչպես որ կարգն է Հայաստանում:

\*\*\* Ներառում է այնպիսի ներդրումներ, ինչպես օրինակ բաժնետիրական կապիտալում ներդրումն է:

Ես հաստատում եմ, որ վերը նշված պատասխանները ճիշտ են և որ այս հաստատությունը համապատասխանում է և կցանկանար մասնակցել Ջրից դեպի Շուկա վարկային ծրագրին որպես վարկատու<sup>2</sup>:

Ստորագրություն: \_\_\_\_\_

Անուն: \_\_\_\_\_

Պաշտոն: \_\_\_\_\_

Ամսաթիվ: \_\_\_\_\_

*Վկա:*

Ստորագրություն: \_\_\_\_\_

Անուն: \_\_\_\_\_

Պաշտոն: \_\_\_\_\_

Ամսաթիվ: \_\_\_\_\_

<sup>2</sup> Այս հայտը պետք է ստորագրվի հաստատության Գործադիր տնօրենի/Գլխավոր գործադիրի/Գլխավոր տնօրենի/Վարչության նախագահի կողմից /որը պետք է կից ներկայացնի լիազորման տեղեկանք/ և վկայագրվի հաստատության այն կառավարող աշխատակիցների կողմից

## ՀԱՎԵԼՎԱԾ III – ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՁԵՎ